Պայքարատանն իր իրավունքները կորցրել է Լեռնային Ղարաբաղում 1813 թվականի հոկտեմբերի 12-ին, երբ Գյուլիստանի հայկական մեյրիթությունում կնքված և միջազգային շրջանակներում լայնորեն հայտնի ռուս-պարսկական պայմանագրով Լարաբաղի և Գանձակի լեռնայինությունները, որոնք որպես վարչաքաղաքական միավորներ ստեղծված էին հիմնականում Լեռնային Ղարաբաղի տարածքում, վերջնականապես անցան Ռուսաստանի գերիշխանության ներքո: Պայմանագրի III-րդ հոդվածում հստակ նշված է «Հոդված III. Նորին Շահական մեծությունը իբրև ապագույց Նորին Մեծության Ամենայն ռուսաց կայսեր նկատմամբ իր տածած անկեղծ բարեկամության, սրտնով հանդիսավոր կերպով ինչպես իր կողմից, այնպես էլ Պարսկական գահի բարձր ժառանգների կողմից, որպես Ռուսաստանյան կայսրությանը պատկանող սեփականություն է ճանաչում Լարաբաղի և Գյանչայի խանությունները, որոնք ներկայումս վերածվել են Ելիզավետպոլսյան անունը կրող նահանգի, ինչպես նաև Շարիի, Շիրվանի, Դեբեդենտի Ղուբայի, Բարվի և Թալիշի խանությունները սույն խանության այն հողերի հետ, որոնք այժմ գտնվում են Ռուսաստանյան կայսրության իշխանության տակ»:

Ֆարսկան Ռուսաստանի տիրապետությունն Անդրկովկասում և բնական է Լեռնային Ղարաբաղում ավարտվեց 1917 թվականին, երբ Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում Ռուսական կայսրությունը թողեց պատմության թատերաբեմը:

1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղը դե-ֆակտո անկախ, բայց միջազգայնորեն չճանաչված պետական կազմավորում էր օրինական իշխանություններով, որոնք վերահսկում էին երկրում առի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքն ու ապահովում Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանությունը արտաքին ռոնձգություններից և առաջին հերթին ինտերվենցիայով Անդրկովկաս ներխուժած թուրքերի ու նրանց սպիանների վրա Բարվում ստեղծված մուսավաթական Ադրբեյջանական Դեմոկրատական Հանրապետության զինված կազմավորումներից: Այդ տարիներին դարաբաղցիները ղեկավարառաբար ընտրված իրենց

բարձրագույն իշխանությունների՝ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների միջոցով բազմիցս արտահայտել են Հայաստանի Հանրապետության կազմում լինելու իրենց կամրոք և մերժել ներատարածքի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի հավակնությունները: Միջազգային հանրությունը ի դեմս Ազգերի լիգայի օրինական չի ճանաչել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի հավակնությունները և մերժել է վերջինիս Լիգա ընդունվելու դիմումը հենց այն հիմնավորումով, որ նա իշխանություն ու գերահակողություն չունի այն տարածքներում, (ոչ և Նախիջևան էր, և Լեռնային Ղարաբաղը): որոնք նա վարձում էր ներկայացնել որպես իրենը՝ նպատակ ունենալով ընդարձակելու ոչ միայն իր տարածաշրջանը, այլև ուղիղ և լայն սահմաններ ունենալ Թուրքիային հետ: Հարկ է նշել, որ «Ադրբեջան» քառն այն տարածքների անջուրայամբ, որոնք հետագայում մտան Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ, սկսել է գործածվել միայն 1918-1920 թվականներին «Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության» հռչակման պահից: Մինչ այդ, պատմությանը հայտնի է միայն մեկ Ադրբեջան՝ իրանական Ատրաբատականը (Ադրաբադականը), որը մինչև դարձումով ձևավորվել է յուրօրինակ արտասանությամբ դարձել է Ադրբեջան: Այժմյան Ադրբեջանի սահմերական բնակչությունը մինչև 19-րդ դարը և ժուսական կայսրության օրոք կոչվում էր թաթարներ: Ռուսական Մավտակ շարժման լիդեր Ա. Դենիկինը «Ռուսական խտվության ակնարկներում» պանսլոյրական նոր պետության կազմավորման մասին գրում է. «Ադրբեջանական հանրապետությունում ամեն ինչ արհեստական էր «ոչ իսկական», սկսած անունից, որ վերցված էր Պարսկաստանի նմանօրինակ մի գավառից: Արհեստական տարածք, որ ընդգրկում էր ինգիլական Ձարթաթան, հայ-թաթարական Բարփի և Նիզավենուպոլի նահանգը և ռուսական Մոզանը» և միավորված էր յուրօրինակ քաղաքականությամբ՝ որպես պանսլոյրքիզմի և պանիսլամիզմի ամբողջ կոմբինատում:

1921 թվականին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության կամաքարտահայտության հիման վրա, ինչպես նաև Խորհրդային Ադրբեջանական Հանրապետության միջնորդ տարածքների նկատմամբ հավակնություններից հրաժարվելու և Լեռնային Ղարաբաղի պատահանը ինքնորոշման իրավունքը ճանաչելու պայմաններում ներկրամսեր հեռակվեց Խորհրդային Հայաստանի անկապտելի մասը:

Նույն 1921 թվականի հուլիսի 5-ին Անդրկովկասում Ռուսական կայսրության մեծապետական իրավունքներից հրաժարված Խորհրդայնացված Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղում վերջնականապես կողորցեց իրավունքները այն բանից հետո, երբ իր իսկ պարտադրանքով Ռուսաստանի կրոնիստական բուլշեիկյան կաուսակցության Լոկկասյան քրուտի (Երվբյուրք) որոշմամբ այդմե Խորհրդային Հայաստանի մաս դարձած Լեռնային Ղարաբաղը լայն իրավունքներով, մարզային ինքնավարության պետական-իրաւական կարգավիճակով մտցվեց Խորհրդային Ադրբեջանական Հանրապետության՝ որտեղ ոչ ազգային, սուսույաններին ու հայերի ինտերնացիոնալ հանրապետության սահմանները: Ի Սուսային ղեկավարությամբ հաստատվեց Թուրքիային պահանջը, համաձայն կարսի պայմանագրի՝ Լեռնային Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ տալով նրան մարզային ծավալուն ինքնավարություն, ռստ էության կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը ԱդրեՍՀ-ում, որը կազմում է 4400քմ և որը Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածք չէ: Իրավական տեսակետից յոթնև յոթյուրորդ որոշման ամենակարևոր դրույթն այն էր, որ նախատեսում էր ինքնավար մարզը ստեղծել որչ Լեռնային Ղարաբաղում՝ ներառյալ կենտրոնական և չուսիսային Արցախի շրջանները (այսօր ԼՂՀ-ն վերանվում է միայն Լեռնային Ղարաբաղի հարավային շրջանները): Ահա թե ինչ է ասված փաստաթղթում: «Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային հաշտության անհրաժեշտությունից, վերին և Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից՝ Լեռնային Ղարաբաղը յոթնև ԱդրեՍՀ սահմաններում՝ նրան տալով լայն մարզական ինքնավարություն՝ նրա կազմի մեջ մտնող Շուշի վարչական կենտրոնով»: Այդ որոշումը ապօրինի ճանաչելու դեպքում ողջ Լեռնային Ղարաբաղը և ոչ թե նրա մի մասի վրա հետագայում ստեղծված ինքնավար մարզը պետք է դիտվի Հայաստանից թե՛նապակցված տարածք: Նույն որոշումը օրինական ճանաչելու դեպքում այն պետք է հավասարեցվի միջպետական բազմակողմ պայմանագրին: Եթե որոշումն ընթանի այնպես, ինչպես այն գրված է, ապա դժվար չէ նկատել, որ

Ղարաբաղը չի դիտարկվում որպես Ադրբեջանի մաս, «Ադրբեջանի հետ Ղարաբաղի մշտական տնտեսական կապի մասին» փաստարկում Ղարաբաղը և Ադրբեջանը դիտարկվում են որպես աշխարհագրորեն տարբեր տարածքներ (ինչպես Լեռնաստանը և Գեմրանիան):

Լեւոնային Ղարաբաղը թողնվում է ոչ թե Ադրբեջանի, այլ Ադրբեջանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմաններում (որոշման մեջ հստակ տարբերակված են աշխարհագրական և պետական կազմավորման անվանումներ):

Որոշման համաձայն Լեւոնային Ղարաբաղին Շուշի վարչական կենտրոնով «Ադրբեջանի սահմաններում» տրված է «այն մարզային ինքնավարության» պետական-իրավական կարգավիճակ:

Ադրբեջանը ստեղծվում է ոչ թե որպես կովկասյան թաթարների (ադալիսին էր այդ տարիներին Ադրբեջանի թուրքերի ազգային ինքնամասնավոր) ազգային պետություն, (այլ դեպքում այն կհռչվեր կովկասյան Թաթարական ԽՍՀ), այլ որպես հայ-մուսուլմանական պետություն, որտեղ հայերին, «մենկով մուսուլմանների և հայերի միջև ազգային հաշտության անհրաժեշտությունից» հնարավորություն է տրվում Լեւոնային Ղարաբաղում ունենալ յայն իրավունքներով ինքնավարություն որպես ադրբեջանախայրյայան պետական-իրավական պաշտպանվածության լրացուցիչ նրաշխիք:

Խորհրդային Ադրբեջանական Հանրապետության իրավունքները Լեւոնային Ղարաբաղում դադարեցին 1991 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, երբ առանց իրավահաջորդի դադարեց գոյություն ունենալ որպես հայերի ու մուսուլմանների «միասնական պետական միություն» հիմնված խորհրդային այդ հանրապետությունը: Նույն ամիսներին ապաքրեց իսպանացի Ադրբեջանական Հանրապետությունը 1991 թվականի օգոստոսի 30-ին ընդունած անկախության վերականգնման Հռչակագրով և 1991 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունված պետական անկախության Սահմանադրական ակտով հիւսիսարեւելյան Սոցիալիստական Ադրբեջանի իրավահաջորդությունից և վերադառնալով 1918-1920 թվականների իրողություններին, վերականգնեց Ազգերի Լիգայի Լիգայի կողմից դե-յուրե չճանաչված մուսավաթական Ադրբեջանական Հանրապետության պետականությունը, որը չունեւր ճանաչված, լեգիտիմ սահմաններ և չէր վերահսկվում ոչ Լեւոնային Ղարաբաղը, ոչ էլ Նախիչևանը:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեւոնային Ղարաբաղի Հանրապետությունը: ԸՂՀ կայացել է այն տարածքների մի մասի վրա, որոնց նկատմամբ նախկին Ադրբեջան իրավահաջորդությունից հրաժարված և մուսավաթական Ադրբեջանի պետականությունը վերականգնած Բարոն գործը բազմակողմ միջազգային պայմանագրերի համաձայն կորցրել էր իր իրավունքները: Ադրն 1991 թվականին հոկտեմբերին Լեւոնային Ղարաբաղը (որը Լեւոնային Ղարաբաղը և Նախիչևանը) կարգի ապամասնագրի (1921 թվականի հոկտեմբեր) և կոմբյուրոյի որոշման համաձայն նորանկախ Ադրբեջանական Հանրապետության տարածքները չէին ըն-յուրե: Ըստ Լուրջան միակ Հայաստանի Հանրապետությունն էր, որ կառող էր որպես Խորհրդային Հայաստանի իրավահաջորդ վիճարկելի Ղարաբաղի փոողովի վիճող: Սակայն ՀՀ-ը գերադասեց չբարդացնել իրավիճակը տարածաշրջանում և համաձայնել դե-յուրե իրեն պատկանող տարածքներում ԸՂՀ կայացմանը:

Մերևս վերջին ջրջանում հաճախ է խոսվում այն մասին, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքը ազգերի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը կլինի: Վերջին իրադարձությունները մեկնաբանող շատ քաղաքագետներ և վերերոձարաններ այն համակարծիքն են արտահայտում, որ ազգերի ինքնորոշման իրավունքը ակնայտ առավելություն ունեցավ տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ, ինչի մասին վկայում է կոտովոյի, Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը, և ինչի հեռևանքով էլ խուճապ է առաջացել Բարսիում, որովհետև առաջին անգամ կապիտի տակ է դրվում տարածքային ամբողջականության սկզբունքը: Չի բացառվում, որ մոտ ապագայում կոտովոյի, Հարավային Օսիայի մի Աբխազիայի անկախությունը ճանաչելու նախադեպերը գուցե և կարող են ավելի արագացնել և հեշտացնել մյուս ստանդարտը հակամարտությունների լուծումը կամ ընդհակառակը բարդացնելը: Բայց պատմության փորձը մեզ հիշեցնում է այն դառը և ցավալի իրողության մասին, որ աշխարհի գերտերությունները նմանառոյակ վիճահարյաց հիմնախնդիրն են լուծելիս և իրենց ողորչումները կայացնելիս առաջնորդվում են նախապատվությունը տալով ոչ թե սահմանների անձեռնախնդիրության ու տարածքային ամբողջականության սկզբունքին կամ ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքին, այլ նրանք այս կամ այն սկզբունքն ընդունում ու կիրառում են միայն այն դեպքում, եթե նրա բխում է նրանց ռազմավարական շահերից ու աշխարհաքաղաքական նպատակահարմարությունից, քանզի սկզբունքների բաղադարումն էրան նրանց՝ առաջնային և երկրորդային հերթականություններ վերագրելը ըստ Լուրջան կրում են ձեռնական բնույթ: Այս է վկայում նաև Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ բազմիցս լսված այն

արտահայտությունը, որ Լեւոնային Ղարաբաղը «առանձնահատուկ» դնւր է և պահանջում է առանձնահատուկ մտոնցումներ: Թերևս նման կարծրադիպ մտածողության տրամաբանական շարունակությունն այն կլինի, որ այս առնձնահատուկ դնւրը մի առնձնահատուկ օր իր առնձնահատուկ որոշումը կունենա այն ժամանակ. երբ տարածաշրջանում մի առնձնահատուկ պահի աշխարհի գերտերությունների շահերի առնձնահատուկ համընկնում կլինի: Ուստի նոր ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակը սեզ ստիպում է առնձնահատուկ ուշադրությամբ և համատեղությամբ ներկայացնել դարաբաղյան հիմնանիւնը միջազգային քաղաքականության տեղեկատվության և քաղաշրջության ասպարեզում: Տարածքների ամբողջականության և ազգերի ինքնորշման սկզբունքների միջև գոյություն ունեցող հակասության շուրջ բարձրացած աղմուկը սոսկ միջոց է բանակցությունները կեղծ հունով տանելու դեպի արհեստականորեն ստեղծված փակուղի: Երբ մենք ատում ենք ինքնորշվում ենք, նշանակում է՝ ինքնորշվում ենք մայր պետության, մետրոպոլիայի տարածքում: Այնինչ 1991 թվականին սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները, մինչ մեծօրյա Ադրբեյջանական Հանրապետության միջազգային ճանաչումը և ՄԱԿ ընդունվելը, մենք կայացել ենք նրան չպատկանող տարածքներում և սա արդեն հզոր փաստարկ է՝ ըստ էության ամենահզորը: Անկախ պետականություն ունենալու մեր իրավունքը փառոց ճանաչված է: 1925 թվականներին մարզը ստեղծվել է՝ իբրև խորհրդային պետականության ձև, իսկ 1990 ազգրիի 3-ին ընդունված «ՌՍԿՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հարցերի լուծման կարգի մասին» ՌՍԿՄ հայտնի օրենքը վերահաստատել է այդ իրավունքը: Այս օրենքով ինքնավար կազմավորումներին հնարավորություն տրվեց ինքնորշվել որպես միութենական դաշնության ինքնուրույն սուբյեկտներ: Միաժամանակ ԼՂՀ-ն որպես օրինական ձևով ստեղծված պետություն, ինքն ստացավ «տարածքի ամբողջականության» և «սահմանների անձեռնամխելիության» սկզբունքները կիրառելու միջազգային-իրավական հիմքեր՝ ի շահ իր իսկ անվտանգության:

Լեւոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում մենք պետք է համենք ԼՂ ժողովրդի ինքնորշման իրավունքի միջազգային ճանաչման, Ադրբեյջանի կազմում լինելու անհնարինության, պատերազմի վերսկսման բացառման, միջազգային հատակ երաշխիքների ձեռքբերման անհրաժեշտության, որոնք ուղղված կլինեն բնակչության անվտանգության ապահովմանը և համաշխարհային առաջադեմ գործընթացներին Լեւոնային Ղարաբաղի լիարժեք մասնակցությանը:

Резюме

В данной статье упоминаются причины возникновения Карабахского конфликта, освещаются различия двух принципов международного права, относящихся к урегулированию Нагорно-Карабахской проблемы, каковыми являются территориальная целостность и право свободного самоопределения народов. Также приводятся исторические и правовые факты легитимности становления НКР. Дается сравнительная оценка возможности урегулирования региональных конфликтов подобного рода.

Գրականություն

1. «Լեւոնային Ղարաբաղի հիմնանիւնը. կարգավորման ուղիներ՝ խորհրդարանական լուսններ, մարտի 29-30, 2005թ.» Երևան 2006:
2. Հ. Գ. Ազատյան «Բախտորոշ պայմանագրեր» Երևան 2002:
3. Վիկտոր Կրիվոպոսովով «Նախաձեռնույթ Ղարաբաղ» Երևան 2008:
4. Ա.Մ. Մանասյան «Ղարաբաղյան Ազատամարտը Հայոց քաղաքական հայելում» Երևան 2003:
5. Վ. Բոչարյան «Միջազգային Իրավունք» Երևան 2002:
6. www.karabagh.am
7. www.karabakh.net
8. www.welcomearmenia.com

ԵՊՀ, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն

ՀԱՋՈՂ ՄՈՒՏԲ-ՎԵՐՈՆԹԱՅ ՃԱՆԱՊԱՐՀ

Ն.Կ. Մանգասարյան

Սույն հոդվածում քննարկվում է ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, գրական մի շարք մրցանակների ասպետ, բանաստեղծ Արտեմ Հարությունյանի «Նշանների երկիր» առաջին ժողովածուն՝ Ստեփանգործությունների կոնկրետ վերլուծությունների հիման վրա ապացուցվում է, որ լուսնաստեղծի երախայրիքը լուրջ մուտք ու նպատակամետ թափ էր դնելի պոետական արվեստի այն բարձունքները, որոնց հասել է նա ստեղծագործական իր քննմամբը ճանապարհին:

Արտեմ Հարությունյանն անգլյալ դարի 1960-ական թվականների ժամանակներին ասպարեզ իջած տաղանդավոր բանաստեղծներից է, նրա առաջին գիրքը լույս է տեսել 1977 թ. «Նշանների երկիր» խորագրով: Նրանում գեղեցիկ են բանաստեղծի նախորդ շրջանում ստեղծված երգերը: Ընթերցելով դրանք, գալիս են մի եզրակացության, որ բանաստեղծի որոնումները ոչ թե անորոշ փորձեր են եղել, այլ նշանառուի դիպուկ կրակոցներ, այսինքն՝ նա լսել է իր արյան կանչին, հոգու արձագանքին և ընթացել մտքի թելադրանքով: Դրա շնորհիվ էլ առաջին գիրքը գնահատվել է որպես հասուն պտուղ: Ինչու՞ է գիրքը կոչվել «Նշանների երկիր»: Այս հարցի պատասխանը կարելի էր վստահորեն ասել նրանով, որ նա քաջահայտում է բանաստեղծի գեղագիտական իդեալից բխած մտքերն ու իրականությանը տված գնահատականները:

Համաշխարհային գրականությանը հայտնի է, որ առանց սիմվոլների, այսինքն՝ առանց նշանների գեղարվեստական բնույթ գոյություն չունի: Մենք դիտարկել ու նկատել ենք, որ մեծամասամբ գոտեմանները բնությունը և առարկաները անձնավորելիս առաջին պլանի վրա ներկայացրել են քնարական հերոսին: Ա. Հարությունյանի երգերում առաջին պլանի վրա նշաններն են՝ ամբողջությամբ ներկայացվող համապատկերի վրա, որոնց ընդհանրությունը դառնում է երկրի գեղարվեստական կերպարը: Այդ մղումով բանաստեղծը նշանների անձնավորումը կատարել է մարդկային խորախորհուրդ սուրումների տեսանկյունից: Ստացվել է մի հետաքրքիր երևույթ՝ պոեզիայի գեղարվեստական հնարքների ինքնատիպությունը ու թարմությամբ բանաստեղծին արարել է երկրի պատկերը: Հենց այս գլխից ընդգծենք, որ Ա. Հարությունյանի հայտնության գրավակաճար պատկերավորության թարմ միջոցների և ձևերի մեջ է:

Բանաստեղծի առաջին գիրքը բացվում է նույն վերնագիրն ունեցող համառոտ մի հյուսվածքով: Ընթերցելով այն, հավատում են հեղինակի ու՝ մտածողությանը, և՛ նպատակի ազնվությանը: Նա թելուզ ինչ որ տեղ դեռնա չի վստահում ընթերցողին, չլինի, որ նա ճիշտ չհասկանա իրեն, միաժամանակ իր պարտքն է համարում բացել վրակազծերը և ի տես ղնել սիմվոլների էությունն ու նշանակությունը: Նա ժամանակը գնահատում է որպես »երկիր«, զգույշ ամպ, որը շարժվում է եղանակին «համընթաց», որ «ժամանակը՝ մաքուր ծայն» է, «Միայնակ ջրի հոսք», իսկ այդ ջրի հոսքը կույ չի գնացել քարերին: Ստեղծելով խոսող այս պատկերը, բանաստեղծը անմիջապես դիմում է ինքն իրեն.

Ընկալիր աշխարհը ձգտման պահին:
Այստեղ սերը՝ միայն այգաբազ, մայրամուտ,
Ուրիշ ծայների համար տեղ չկա:
Սուրբ է ժամանակն այս վայրում,
Որտեղ քարը վարդի հետ է ապրում: (Էջ 3)

Դժվար չէ նկատել, որ երկրի բանաստեղծ որդին առաջին հերթին ներկայացնում է հարազատ Հայաստան աշխարհը, որտեղ քարը շարունակում է իր հեռագնա ճանապարհը վարդի ուղեկցությամբ, վարդի թույրով ու թույրով:

Ա. Հարությունյանի նշանների երկիրը հինավուրց Նաիրին է, այն քնորդանը, որտեղ հայ ժողովուրդը գտել է իր ճակատագիրը, կրել իր բաժին խաչի ծանրությունը: Նաիրի աշխարհի տառապանքներով ու ակնկալիքներով աշխույժ են նա երագանք ու հույս ունի: Հենց այս մտորումների սրմունք էլ են իր երագանքի զգեստներն է, հագցնում Մասիապարունչ քամիներին.

բարդինների ծիգ կատարներին, կայծակներին ու ամպերին եւ նրբանկատության ամենատուր
արդի, թափսիծով արձանագրում:

Խոտը մղում է իր շեղբը դեպի վեր-
կտրում երակը թափառող ամպի:
Մի փտտահ քամի՝ ձգվող լարի պես
Տանկաբառում էր լույսը կնստովա
Եվ արեւ դնում ուղիղ կենտրոնում: (Էջ 7)

Նշանների երկրի բանաստեղծը խոհափմաստասիրական իր մեկնություններով շունչ ու
մարմին է հաղորդում տնայլային-պատրանքային իր պատկերներին: Ասեւ խորհում ու խոսում
են իրերը եւ բացում իրենց ոգու շառավիղները: Այս մղումով էլ բանաստեղծը մտորում է.

Ահա այսպես էր ժամանակ դառնում
Այն ինչ խոր կանչ էր, ճյուղ եւ ամպաշիր,
Մենք մոռացել էինք մեր անցած կյանքը,
Բայց օրվա խորքը գեթ բաց էր մեր դեմ: (Էջ 8)

Ահա հենց այս օրվա խորքը թափանցելու եւ ժամանակի Լույթունը քացահայտելու ձգտումն
է, որ վառում եւ անհանգստացնում է պոետին:

Այստեղից էլ որոնումների վճիռը: Հարավտփոխ կյանքը թելադրում է իր
փիլիսոփայությունը: Պետք է տեսնել սկզբնական ճանապարհը, դրսեղ ապագայի պատասխանը
ներկայացված է սեփական ընկալմամբ: Ա. Հարությունյանը ձգտում է իրերի դիալեկտիկայի
ընթացմամբ իր ժամանակակցին հաղորդել բնության եւ սարդու ներքին
փոփոխարձեռությունների ներդաշնակությունը: Եվ դա հայտնվում է նրան: Վկայակոչվե՞ր նրա
«Որոնումներ» եւ «Պայքար» բանաստեղծությունները, որ հայտնվում են սիմյանց, կազմում սի
միանություն: «Որոնումներում» բանաստեղծը նկատում է, որ «Լ. նշանը դեմ մնում են կիսաբաց,
դրսի աշխարհը փորձում է ճանաչել իրեն»: Բայց ինչու էլ պիտի ճանաչի աշխարհը եւ
հետեւանքում շոշափի աշխարհընկալման եւ ինքնաճանաչման իր մարմին առած գործո՞ւնները:
Այս վճռականությանը քնարական հերոսը խոստովանում է.

Բայլում եմ նրկար, մինչեւ օրը դառնա կարծր ու միջուկ:
Բարի եւ օդի աստիճաններում ծառերը ժպտում են,
Եվ մայրամուտը դառնում է, դաժան-միանգամից: (Էջ 10)

Ա. Հարությունյանը դեռես իր առաջին փորձերից սկսած ընտրել է տեսլային եւ
մտաաֆորային մտապատկերները: Այստեղից էլ նրա ներժումը հրապարակախոսական
տարրերից: Թե՛ն նա շրջանցում է բանաստեղծության դասական ձևը՝ համաշափ թիջմի եւ
հանգավորման առումներով, սակայն պոետական էթիկայի դիտակետից նա դասականին
ժառանգորդն է՝ բարդական կենցվածքով: Նա տեղի չի տվել գեեհկարանությանը, միանգամայն
հեռու է հուսալքությունից: Նա իր պոեզիայում պատկերային բնապայտական սկզբունքով
նկատում ու խարագանում է հասարակական եւ անհատական արատները, հաստատում այն
ամեն բարին ու լավը, որոնցով բնութագրվում է նշանների երկիրը՝ Հայաստան անունով: Ա.
Հարությունյանի պոետական խառնվածքին հարազատ է մարդկության ստեղծած ինագական
մշակույթը, որի շնորհիվ նա կարողանում է թափանցել թե՛ հայրց միջնադարի եւ թե՛
համաշխարհային գեղարվեստական խոսքի շերտերը եւ յուրացնել նրանց լավագույն
սովանդույթները: Մեծական հունձձի իր ծանրակշիռ բեռն է, որ նրան մղում է դեպի
ստեղծագործական գանկայի աշխարհ, որը դառնում է բանաստեղծին շոյող կանչ:

Այնտեղ, ուր սովերն է ամպից ձափալում, իմ Լույթունն է:

Փռվոխում են իրար հողն ու երկինքը, չկա միջինը, չկա վախճան-

Որեմեն ժամանակը կարող է պտտվել եւ բերել այսքան սուվեր ու պայման: («Կանչ», էջ 21)

Մտվորի եւ պայմանների անձնավորմամբ բանաստեղծը բացում է պոեզիայի
փիլիսոփայության եւ պատմականության փակագծերը, ի ցույց դնում հոգեբանական իր
յուրացումները: Նրա գեղագիտական հավատամքը դրսեւորվում է նշանների միջոցով,
արդյունքում ձեւավորելով ստեղծագործական իր սկզբունքը: »Լույթունը առաջ« հյուսվածքի հենց
առաջին սողները ընթերցողին տանում են դեպի այն Աշխարհը, որն անձնավորվում է
բանաստեղծի թափանցող հայագրով:

Նշանների մի համակարգ է քննարկվող գրքի բանաստեղծությունների անգամ վերնագրերը «Դրանք են՝ «Անձրե», որ մարդության խորհրդանիշ է, «Ճարժում»-որպես բնության դիվերկտիկայի ընթերցում, «Անտառ կանչում է...»-«կյանք իմաստով, «Բնյանքի կանգալու»-որտեղ մարդը տնենում է իրեն, «Օղբ»-ոգու ազատության խորհրդանիշ, «Տանաստեղծություններ...»-մարդ-աստղ համակոչությանը, «Մատուցի»- քաղաքացու տարիների գումարը:

Մարդկային աստվածանվեր հույսի բանաստեղծականացման հաջող օրինակ է «Տանդիպում» պատկերը: Նրանում միաձուլվելով ընդգծված է գիտակցության և զգացմունքի պահը:

Ժամանակակից գրականագետ Ալեքսանդր Թովչյանը նկատել է. «Այստեղ «Հարություն»-ի պոեզիայում ինձ միշտ զարմացրել է մարդու բանաստեղծության ևս կոչու, նյութականացած առօրյայի համատեղումն ու ներթափանցումը: Մնալով երկնային ոլորտներում, նա կարողանում է համարձակ դիպչել և իր գուտ բանաստեղծի շիտակ ու անարդ հայացքով նայել առօրյայի և ժամանակի յուրաքանչյուր երաշեկ գալարումին. XX դարի բնության ծնունդին: Նա կարողանում է համատեղել Էսոպին ու Գեղեցիկը, և ազատ երենակալության սյունեակ թոփոք չի խանգարում նրան տնենել երկրի վրա ամեն մի հրեշավոր անարդարություն, լինի այն Ղարաբաղում թե՛ Վիետնամում: Մա՛ տեսիլքի պոեզիա է!», Ա. Հարությունյան «Հուրայի արձակուրդը», Եր., 2003, էջ 409:

Ա. Հարությունյանի փիլիսոփայությունը իր եզրերով տիեզերական է: Նա իր խոհերի գույները փնջում է օդից, բույսերից, անտառից, մանկությունից, ժամանակակցից, սիրուց, մարդկային տառապանքից, հույսից ու յուրսից, կասկածից ու վստահությունից: Բնաբական հերոսի հոգին նա նշմարում է «Ազատ պատառատող քամու մեջ...», որտեղ օրը ձգվում է «Դեպի կարտուներ ձյուն ծաղ բլրին»: իսկ այդ կատարները «Վեր են նայում հավերժության օրից, Եւ չեն հազնում, չեն քնում»:

Դժվար չե՛ նկատել 60-ական թվականների պոետական սերնդի արթնացման կոչը դեպի այն ճանապարհը, որ տանում է տնից տուն: Օդի, ծառի, շարժման, լճակի, երկնքի, ծխի, ձյունի, ամպի փոխաբերությանը Ա. Հարությունյանը մատուցույց է անում հնդաշրջումի այն հոսքը, որ եղավ անհատի պաշտամունքի քննադատությունից հետո: Կոտորվել էր սատույցը, համարձակություն էր պետք՝ մարքելու պոեզիայի այն տաշտակը, որ սարքվել էր խորհրդային տարիներին, և միայն ընդունված էր նրա համար թու՛ած լաթանորը՝ որպես Լենինյան հոգեուր հացի սերույց:

Նոյակ այն, ինչ որ պիտի լիներ: Հնչել Ամուսի բանաստեղծության հզոր զանգը, նրա դողանջները արթնացման կանչեր դարձան Ռ. Դավդյանի, Հ.Էդրյանի, Հ. Գրիգորյանի, Գ. Հովհաննիսի եւ նրանց գրչընկերների համար: Այդ աստղաբույլի մեջ նաեւ Ա. Հարությունյանն էր իր արժիհագարդ տաղանդով: Այդ, խիզախություն էր պետք պոեզիայի նոր ուղիներ բացելու համար, և բացվեցին: Չնայած ժամանակի գրաքննադատներից որոշ ընկերներ դժոխս չին ընկալում շարժման հեռագնա Լույսունը, միեւնույն է, պոեզիան ընթանում էր կյանքի հրամայականով: Որպես նման միտումնայնության պատասխան, Ա. Հարությունյանը ներկան պատկերում էր որպես «մի վայր, որտեղ ծաղկել են յորենին, վարդը և մագվոդ բույսերը: Բամի: Շարժում: Չկա կենսովա Վախճանի զգացում («Ամայի մի վայր»): Ապա իրեն զգացնել է տալիս «Անտառի ժամանակը», և բանաստեղծը ներկայացնում է պատկերն իր հավատամքով:

Գրականագետ Հ.Մուսայելյանը դիտարկելով 60-ական թվականների հայ բանաստեղծության տիպաբանության խնդիրները, նշում է, որ գրավանության պատմությունը վկայում է այս կամ այն ժամանակներում նորարարությանը նմուտղ մարտաիրավերների գոյությունը, որ ուղեկցվում են ինչ-ինչ օրենքների պարտադիր հավելումներով: Մակայն դրանք հիմնականում ավարտվում են նոր արժեքների կայացման օգտին: Գրականցետը այդ երեւույթ չի պայմանավորում նորարարության բնած օրենքների գերակշռությանը: Նա հաստատում է, որ «օրենքներ չկան, կա լոկ իրավունք», ինչն էլ նոր օրենքների ծնունդի յուրօրինակ իրավիճակն է: Այս դիտարկումից հետո Հ. Մուսայելյանը գտնում է, որ պոեզիան պետք է գնահատել որպես առանձին, բարձրագույն արժեք: Եւ այդ բարձրագույն արժեքի էջերից մեկն էլ համարում է Ա. Հարությունյանի բանաստեղծությունը. «Ա. Հարությունյանի ստեղծագործություններում առաջնային պլան է մղվում բարձր գիտակցականությանը օժտված մարդ-քաղաքացու պատասխանատվությունը իր երկրի. նրա այսօրվա ու վաղվա նկատմամբ: Հեղինակի բանաստեղծություններում մասնակիորեն արտահայտվող ինքնությունը սուկ միջոց է գործնականորեն ներկայացնելու շրջակա աշխարհը: Ահագնանալով՝ բանաստեղծի կենսափորձը

մտնեմունքն է մարդուն, դառնում է նրա բնական ծայրը ընդ եւ ասպնահեղձությունը տրվում է մտքին ու պատկերին: Ինդիքն այստեղ միայն արտացոլվող աշխարհի նորոքյա ըմբռնումը էլ, այլ նախ եւ աստաջ այդ աշխարհի մեջ բանաստեղծի նոր կենսակերպի դրսևորումը»:

Ա. Հարությունյանի «Նշանների երկիր» ժողովածուի մեջ հատակորեն երևում է նրա պոետական կենսակերպն ու կենսադիրքը: Նա զեղազիտական զգացումները շիկանում է բնության ու հասարակական երևույթները միասնության մեջ նկարագրելիս: Նա դրանք գնահատում է, գեղեցիկի փոխտվայական ընկալմամբ:

Ականավոր գրականագետ եւ հասարակական գործիչ, Սփյուռքի վաստակաշատ դեմքերից մեկը՝ Երվանդ Ազատյանը, արդարագիտորեն եւ պոեզիայի խորագնին իմացությամբ ընդգծել է. «Հարությունյանի պոեզիան կարգալիս մեզ այցելում են քաղաքական տեսիլքներ, եւ բիբլիական հուշի գործերը հետապնդում են մեր երեւակայությանը... Եւ այս ամենին զուգընթաց բառի եւ ապրված վիճակի համապատասխանություն եւ կատարելություն, որտեղ մեծ դեր է խաղում արեմտյան մշակույթի նրա խոր իմացությունը», Ա. Հարությունյան- «Հուդայի արձակուրդ», Եր., 2003, էջ 412: Ականավոր գիտնականի այս դիտարկումը հաստատված է բանաստեղծի ժողովածուներով սկսած «Նշանների երկիր» գրքից:

Ա. Հարությունյանի դիրքորոշումը ակտիվ է, դիտողականությունը՝ սուր, պատկերների բազմազանությունը՝ մարդաբույր, ընդգրկումները՝ տիեզերական: Նա իր կյանքը տանում է նրանականերին համընթաց՝ «(Թե՛նի եւ ծառի միակ սաղարթով, ջրերի գիտակցությամբ): Պոետական թարմ գյուտեր կարելի է փնջել նրա ասպին գրքից: Բերեք թե՛նուզ (ձերի աղոտ գիտակցությամբ» տողը: Մեր պոեզիայում, եթե չենք սխալվում, ասպին անգամ է հեշում նման պատկերը: Հենց բնության գիտակցության հրաշքն է, որ երիտասարդ պոետին մղել է դեպի «բլուրն իրական», տեսել իրեն կանչող տարիները, հետևում թողնելով «վախը՝ Սովերը պաշտած, վերապրած»:

Ա. Հարությունյանի տեսիլքների արմատները խրված են երկրի շերտերում, դրա շնորհիվ էլ ընթերցողի սիրտը սիրահարվում է նրա հյուսած պատկերների, թեւում դեպի աստղեր, ջերմանում արեւի շողերով եւ ինքն էլ դառնում կյանք արարող բնաշխարհի սփ մասնիկը՝ հավերժին միանալու քաղձանքով:

Տակիր գարնան հոսքին,
Մի երկինք է մնում ինձ,
Մի թփի սիլուետ,
Որ երազը դեռ փորձում է ծաղկել:
Ձանկանում եմ տեսնել
Անաղարտ էակներ,
Գիշերվա մեջ ապրող,
Արթնացող:
Ձանկանում եմ հպվել
Քարե զանկադատին,
Որ դեպի հավերժն է
Ինձ տանում: (Էջ 39)

Բնության բոլոր հրաշալիքների մեջ նպատակ է կարդում Ա. Հարությունյանը: Այսպես՝ «Անձրեւն է իջնում. նպատակ կա վերելում», «Սուրբ է կաթիլը հիմա անպաշտպան» (էջ 69), «Հույսերը գատկում են հողի ընդերքից եւ դառնում վկան Հին լույսի», «Սովերը տալիս է ինձ իր անմահությունը եւ ծառը մեկնում երկնքին, սովերը դառնում է նոր կրակ» (էջ 70), «Աստղեր են հայտնվում: Գիշերը շերտ է, լույսի պեն նետվում քո հոգում» (էջ 75), «Քարը թեքվում է եւ խոսքս խում» (էջ 78), «Հասունանում են սերմերը հողի, բույսերը՝ ձգվում վտանգի աստաջ Եւ փնտրում արմատ, կապված երկրի հետ» (էջ 86), «Պուրակը դրեզ իր կնիքը օրվա վրա» (էջ 90), «Ամառը փոշուրված է ակազիաներից» (էջ 94), «Պր խոսք է գրում՝ երկինքը մաքրում» (էջ 106), «Երկնքում խնձորենու ծառերը ուշաթափ եղան, ու հողը հոսեց մագների արանքից» (էջ 103), «Հալը կտրող-անցնող ծայրը դաշնամուրի խոսում է նրանակի մեծության մալաջ» (էջ 105): Օրինակները կարելի է ավելացնել համարյա բոլոր բանաստեղծություններին:

«Նշանների երկիր» գիրքը աչքի է ընկնում նաեւ տեղին օգտագործված, բնութագրական փոխաբերություններով: Նրանում օգտագործված տեսիլքային միտքն անգամ ստանում է

կոնկրետ առարկայական տեսք, հնչում պատկերային նոր երանգով, կենդանի ու թրթռուն Դրանցից են. «Ժամանակը երկիր է», «Սերը այգեբաց է», «Նշանները յաշուն են», «Լեռները մաշվում են», «Օդը շնչում է», «Գիշերը շշնջում է», «Ստվերը ծալվում է», «Թփերը այցի են գալիս», «Շարժումը լճակ է» եւ այլն եւ այլն:

Ա. Հարությունյանի մտածողությունը բնապատկերների գործելն է: Նա բնախոյզ եւ բնանկարիչ է բառի բուն իմաստով: Նրա հյուսած բնապատկերները պարունակում են նաեւ պատկեր-ապրումի հնչերանգները:

Թարմ ու կենդանի են հեղինակի ստեղծած պատկերները: Դրանց գույների եւ ձևերի գեղեցկությունը ճանաչվում եւ ընկալվում է ընթերցողի կողմից: Բնության եւ առարկայական աշխարհի երեւույթները արտացոլում են մարդկային վերաբերմունքը, զգացմունքների եւ խոհերի հետ ունեցած սերտ կապի մեջ ստանում մարդկային իմաստ: Վերարտադրելով իրականությունը բնության պատկերների հյուսվածքով, Ա. Հարությունյանը ընթերցողին տանում է ժամանակի քարքեր ու հասարակական հարաբերությունները զուցադրող աշխարհը:

Ա. Հարությունյանի մուտքը պոեզիա՝ «Նշանների երկիր» գրքով, ազդարարեց, որ հանձին նրա նորագույն շրջանի հայ գրականությունը ունենալու է իր ֆենոմեններից մեկը: Եւ նա ապագուցեց դա՝ իր բանաստեղծ ժողովրդի հոգեւոր գանձարանը հարստացնելով ինչնաստիպ ու յուսաառ արժեքներով:

Резюме

В данной статье обсуждается первый сборник «Страна знаков» лауреата государственной премии РА и ярая литературных премий, поэта Артема Арутюняна.

На основе подбора конкретных произведений подтверждается мысль, что первая же книга поэта явилась шагом к тем вершинам поэтического искусства, которых он достиг на своем творческом пути в последствии.

Գրականություն

1. Ա. Հարությունյան, «Նշանների երկիր», Ե., 1977:
2. Ա. Հարությունյան, «Տեսադաշտ», Ե., 1979:
3. Ա. Հարությունյան, «Ընմ», Ե., 1984:
4. Ա. Հարությունյան, «Նամակ Նոյին», Ե., 1997:
5. Ա. Հարությունյան, «Նուրայի արձակուրդը», Ե., 2003:
6. Վ. Գրիգորյան, «Երգեր առանց երաժշտության», Ե., 1975:
7. Վ. Գրիգորյան, «Դիտրովին ուրիշ աշուն», Ե., 1979:
8. Վ. Լոռյան, «Կենդանաբաններ», Ե., 1977:
9. Դ. Հովհաննես, «Երգերի պաակ», Ե., 1974:
10. Դ. Հովհաննես, «Անգյալ կորուսյալ», Ե., 1979:
11. Ա. Մարտիրոսյան, «Բանաստեղծություններ», Ե., 1979:
12. Հ. Թումանյան, Երկեր 4 հատորով, հ. 4., Ե., 1969:
13. Պ. Սեւակ, Երկեր 6 հատորով հ. հ. 5, 6, Ե., 1974, 1976:
14. Մ. Մուսայելյան, «Բառի ինքնահաղթահարման խորհուրդը», «Բիզակ պլյուս», 2006:

ԱրՊՀ գրականության և ժուրնալիստիկայի ամբիոն

ՁԱՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Լ. Գրիգորյան

Մինչև: «Մարտի սարի ամպերը» ժողովածուն Մ.Գալշոյանը պատմվածքների մի շարք է գրել կոմիտասի կյանքից և «Ծիրանի ծառ» խորագրով ի մի բերել «Ծաղկած քարեր» գրքում: Իրանք առանձին դրվագներ են կոմիտասի որբանոցային, ճեմարանային ստեղծագործական լրանքից: Պատմվածքները շաղխված են առանձին երգերի մոտիվներով:

Մուշեղ գալշոյանի պատմվածքները կյանքի պատասխիկներ են՝ իրական շոշափելի: Նա ճիգ է թափում՝ բարդ հանգույցների դիմելու, բազմաթանակ կերպարներ գծելու, փորրիկ պատկերների միջոցով տալիս է կյանքի գծանկարը: Մի երկու դիպուկ շտրիխ, հոգեբանական պահ, ճիշտ գտնված առանձին մանրամասեր սրանք են Գալշոյանի կարճ պատմվածքների հիմքը:

Գրողը կարծես էտյուդներ է վրձնում: Խուսափելով կառուցվածքային խճճվածությունից, նա ստեղծում է մոլայ պահի կամ երևույթի անմիջական տարավորությունը և նկատելի որ Գալշոյանը հիսնակականում ձգտում է առաջին պլանի վրա պատկերել կերպարի բնավորության մի ընդգրկված նունգ:

«Երզը ժողովրդի պատմությունն է», - կոմիտասի խոսքն է «Վարդուղի» պատմվածքում: Երզը որպես ժողովրդի պատմություն և կոմիտասի կյանքը որպես ժողովրդի պատմություն և կոմիտասի կյանքը որպես պատմության խորհրդանշիչ. ահա այս խտացումն է պատմվածաշարի ենթախմատը՝ խիստ բնութագրական Գալշոյանի ստեղծագործական հանումների: կոմիտասի կերպարն այս ակտուրով պատկերել է նաև Պարոյր Սևակը «Անյուրի գանգալատունը» պոեմում, Ռաֆայել Արամյանը կոմիտասյան շարքի պատմվածքներում:

Աշխարհով մեկ սփռված գեղջուկ հայերի հոգում մեթոդ երզը փրկելն ու ժողովրդին վերադարձնելը կոմիտասյան հանճարի, նրա կենսակերպի արտահայտությունն էր, ամեն պահի մարտնչ ժողովրդի ինքնուրույնությունը երզով փաստելու հասար: Գալշոյանն անտարբեր չէր կոմիտասի հանդեպ հենց այն պատճառով, որ այս անհատն ամենալավն էր լավն խտացում իր մեջ ժողովրդի ճակատագիրը: Պատմվածաշարը հետաքրքիր է մեկ այլ առումով, այն հնարավորություն է տալիս երգահանի կենսագրական փաստերի վերլուծությունը առնչել ժողովրդի պատմությանը՝ իրեն հատուկ սթառի ու քննալույս հայացքով: Գալշոյանի համար անընդունելի է կնիծ, հիացական վերաբերմունքն անգլայի շատ երեւույթների հանդեպ: Փաստելի համարման ճանապարհով գրողը բացահայտում է բնորոշն ու տիպականը, ինչը հատուկ է ժողովրդի պատմության տրամաբանությանը:

Շարքն ընդհանրապես հետաքրքիր է իր կառուցվածքով: Յուրաքանչյուր պատմվածք թեմայի վարցացման մի ռյակ է: կոմիտասի կենսագրության պատմությունը տրվում է հայ ժողովրդի ճակատագրի հետ սերտ կապի մեջ, նրանից անբաժան: կոմիտասը գայիս է Լչվիածին, որբերի հետ ուր դնում Արեւելյան Հայաստանի հողի վրա («Օրն ավետյաց»): Պատմվածքում, որտեղ հեղինակն անդրադառնում է Հայոց մեծ եղեռնի պատճառած հեղուկանքներին, ներկայացվում է որբերի մի խումբ, որոնք հավաքվել են սբ. Թեոդոս նկեղնցու բակում և Գեորգ վարդապետ Դերձակչանը նրանց է մտնենում և հաղորդում, որ Լչվիածին վեհափառը որոշել է այդ որբակներից լավ ծայն ունեցողին տանելու է Լչվիածին: «Քնան որբ հավաքվեցին սբ. Թեոդոս նկեղնցու բակում: Ամառավերջի երեկո էր. գաղթի սալահատակից, վանքի քարերից ծլում էր գուր, նվնում էր ալիք-ալիք ու որբերին բերում հաճելի ըղարմություն: Ամառ էր. բայց նրանց ամրագրած ոսկորներում գուրտ կար, և տարությունը դուր էր գալիս: Գեորգ վարդապետ

Գերձակառի հայացքը սահեց. ծանրագավ, ու մեկիկ-մեկիկ ճաշգրգռեց մանչերի կոպերը: Բայց վեհապարտ արահանչել է միայն մեկը՝ քեզ հետ Լչսիաձին կերեսս սի որք, կրտսրես ասննածայնեղին:

«Կարդալատի հայացքը կանգնեց Սողոմոնի դնմբին: Ու մանչի լայն բացած խոշոր աչքերում թրթռաց հայացքը»:

Այնուհետև սկսվում են հայ երգի ու հոգու կորած մասունքների յղմունքները: «Դարտոխ» պատմվածքում արդեն Սողոմոնը Սողոմոն չէր: Երեսունմեկ տարեկան կուսակրոն վարդապետ Լր, Լչսիաձնի Գևորգյան ճեմարանի դասատու: Պատմվածքի պոլիժեն գարգանում է Կոմիտասի խոհերի ու հիշողությունների նկարագրման նդանակով:

«Մոսկվայում թուս ուսանողները բողոքի ցույց արեցին: Սուլթանի բանակը գնաց Կարինի վրա: Ընդ ուսանողները ցույց արեցին, բանակը գնաց Բասենի վրա: Կալվթաթյոնի միտինգ եղավ, սուլթանի բանակն անցավ Բաղեշ: Բոստոնում «Հայոց միացյալ բարեկամների» ժողովում գրականագետ Ջուլիա Հատունը պահանջեց իր բողոքը տպագրել թերթում, ասկյարներն անցան Մարաշ: Հիրմինգամում օտարագրիները ծափահարեցին պոռֆեսոր Թումանյանին՝ Հայաստանի անգլայի մասին կարդացած դասախոսության համար, Ռեկվիի փաշան գնաց Ջեյթունի վրա: Եվրոպական թերթերը գրեցին, ն «Մշակը» արտատպեց. «Հայերը պաշտպանվում են հերոսաբար», Ալի բեյը Ադանայից դուրս եկավ, քչեց Ջեյթունի վրա: Յրաստուհի գրող Սենթինը հուսահատորեն ճչաց. «Բայից նս գարմանում եմ լուրջայան դեմ, Սասիրությունից բխած այս եղեռական Ապատիաի դեմ».- և ...»

Կոմիտասը կործանվող հայրենիքի բոլոր շեններն է մտնում և նշխար-նշխար հավարում հայկական ժողովրդական երգերը: Պատմվածքում հասնում է իր ժողովրդի համար տառապող մեծ երգչի ու երգահանի կերպարը: Հայ երգի Մաշտոցը շտապում է կորստյան վիհից փրկել հայկական ժողովրդական երգերը:

«Աղբրանց արուն մնց քարերուն» պատմվածքում նկարագրում է.թն ինչպես Կոմիտասը երգչախումբ է ստեղծել հայ մանուկներից և հայ երգը հնչեցրել աշխարհի մեծ քաղաքների բնակրում: Արևմտյան Հայաստանից հավարած ժողովրդական երգի նշխարներն Կոմիտասն է գույց է դնում ողջ աշխարհին:

Կոմիտասի մաղկային քարձր քարոյակնություն մասին և պատմում «Ապատում» պատմվածքը: Կոմիտասը գտնում է մի դրամապանակ՝ մեջը 10 ֆրանկ: Հիմա Կոմիտասը խորհում է. «Տխրոք բան է, որվա արդուստ չունենալը: Դա մարդու ծնունդի դեմ, բնության դեմ բան էր: Ամեն մարդ հանապազոտ հաց պետք է ունենա օդ շնչելու բնական իրավունքով, հագուստ ու կապուստ պետք է ունենա իր մորթու գոյության բնական իրավունքով: Այլ հաց ու թացի հագուստ-կապուստի համար չէ որ մարդիկ աշխարհ են գալիս: Դրանք վերուստ տրվում են նրանց ծննդի հետ, տրվում օդ ու մորթու պես: Իսկ եթե չկա, եթե չունի, մեծ ոճրագործություն է կատարվել»:¹

«Ու եկավ նա, -շարունակում է Գալշոյանը, - դեռտաի կին էր՝ այդ մարդու բաճկոնով, այդ մարդու ոտնամաններով, ճոթերը բզիկ գլխաշորով: (Անակնկալ էր՝ չգիտես ինչու, մտրով չէր անցել, որ դրամապանակի տերը կարող էր կին լինել)»:

Դեռտաի կնոջ աչքերում բողոք կար, և հույսը լացի պես կախվել էր ու դողում էր: Նա քայլում էր տրտում ու անվստահ և ոտքերը հայացքի հետքով կամուկաց շարժվում էին. հայացքի հետ դողում, աչքաթարթումի հետ կանգնում՝ ճպտորում մի թիզ գետնին, մտածում այ ու ծախ թերթվելու, ետ դառնալու մասին: Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց կոմիտասին, հետո կծվեց, կուչ եկավ, դարձավ գողտղակ հայացք: Կոմիտասը դրամապանակը տալիս է կնոջը ու հեռանում:

Հայտրդ պատմվածքը կոչվում է «Ջայնիկը ի հոգիս»: Այստեղ նկարագրվում է, որ շոգճնավով Պոլիս եր գնում Կոմիտասը: Օրը գարնան օր է, եւ շատ էր ջրերի աղմուկը: Ապա նկարագրում է, թե ինչպես Կոմիտասը լսում է արաղադի ձայն, եւ նա հիշում է իր արաղադին: Ամբողջ երեակայությանը տեղափոխվում է իր անցյալը, հիշում իր արաղադին: Եվ այստեղ ներկայացվում են Կոմիտասի ամբողջ տառապանքները: «Ջայնիկը ի հոգիս».- Կոմիտասը մտրում արաղադը կրծքին սեղմեց... Մեկելն անգամ ատ արաղադին պետք է ձեռք տրամ, ձեռքս

անպատճառ պիտի դիպցնեն: Լոմիտասը ակն ածեց խոտողին, ծանր քայլերով մոտ գնաց, մորսը նայել պալատուական մի արագազով այդպես ոգվերոված իր հայրենակիցներին եւ ասաց.

-Ափսոս, որ ձեր հոգվի ականջները տակավին օտարտոխ կանչերով ձեզ կոզնեղեն:

Շարքը վերջանաւում է Լոմիտասի երգչախմբի ստեղծման դրվագով («Ձայն ամենայն հայոց...»), որը խորհրդանշական իմաստ ունի:

Լոմիտասը թափառել էր հայոց աշխարհում, լսել ժողովրդի սրտի ու հոգու ձայնը եւ որոշել էր. «Ձայն ամենայն ազգի պիտի հնչեցնել խմբովին...: Եվ հիմա հասել էր Պոլիս, ստել ազգային կերտնակաւն վարժարան՝ խմբելու ձայն ամենայն հայոց»: Լոմիտասը շնդ նայում էր ուսանողներին, գրուցում անբառ: Նա վճռական ասաց.

-Հարկավ, երգչախումբ կազմելու դեմ չեմ: Եվ ձեզ շատ չեմ նեղացնի: Ասեն մեկը մեկ անգամ «ֆա~» պետք է ասեր: Այ էսպէս...³

Աշխարհայացքային առումով այս պատմվածքները հոգեհարազատ են Գալշոյանի ստեղծագործությանը: Հմտորեն օգտագործելով մեծ երգահանի կյանքին ու գործունեությանը վերաբերող փաստերը՝ Գալշոյանը ստեղծել է կենդանի, ժողովրդի հոգսերով ապրող, հույսվածքով: Կենսոլայն բնավորությունը, հնչել իրականում բնորոշ է եղել մեծ արվեստագետին:

Գալշոյանը դուրս չի գալիս փաստերի ոլորտից: Նա նախընտրում է «դեպքը» եւ դրա շրջանակում էլ կատուցում անվիրք: Իհարկէն, պատմվածաշարը կարող էր ընդհարձակվել: Պատումները միմյանց հետ ներքին սյուժետային կապ չունեն, բայց ընդհանուր են տրամադրությանը եւ զծոււմ են ժողովրդական երգի մեծ սիրահարի կերպարը: Պատմվածքները կատուցված են գերազանցապէս հերոսի ներքին խոսքի հյուսվածքով: Գալշոյանը նման դեպքերում գտնում է իրեն, իսկ երբ փորձում է սյուժե ստեղծել երևում են սպիտակ կարերը:

Գրողն ավելի ծանրացել է երգահանի մարդկային որակների վրա եւ դրանց շուրջ էլ փորձել է բացահայտել Լոմիտասի կերպարի առանձին կողմերը: Հետաքրքիր է, որ Գալշոյանը չի գնացել հերոսի սրբացման ճանապարհով, թեւեւ դրա հիմքերն ունէր. մեր բազմադարյան մշակույթի պատմության մեջ Լոմիտասն այն բացառիկ դեմքերից է, որի անվան կողքին հնչել է «Աստվածային» մակդերը: Իհարկէն, նման բնորոշումը կապված է եղել միայն նրա արվեստի բուրնդային մարքոլային հնարարության հետ: Այն մեծ չափով պայմանավորված էր Լոմիտասի մարդկային էությանը՝ արարելու բացառիկ հատկություն, ազնվություն, բարություն եւ այլն: Բնավորության առանձին կողմերը բացահայտելու առումով գալշոյանի պատմվածքները հայողված են:

Резюме

В данной статье автор разбирает цикл рассказов талантливого прозаика М.Галшояна о жизни и деятельности великого композитора Комитаса. Эти рассказы оставляют впечатление художественных этюдов. М.Галшояну удалось создать образ Комитаса, воплощающий в себе и душевное богатство, и ту боль, которую пришлось вынести народу во время геноцида в Османской Империи 1915 года, жертвой которого стал и сам знаменитый композитор.

Ծանոթագրություններ

1. Մուշեղ Գալշոյան, Ծիրանի ծառ, Երևան, 1989, էջ 26:
2. Նույն տեղում, էջ 62:
2. Նույն տեղում, էջ 79:

ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն

ՀՆԻ ԵՎ ՆՈՐԻ ՊԱՅՅԱՐ՝ ԳՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՈՒՂԷԾԻՈՒՄ
(Ն. ԶԱՐՅԱՆԻ «ԱՐՄԱՇՆ» ՊԵՆՍԱ)

Ա. Վ. Բալասանյան

Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո նախկին ԽՍՀՄ հանրապետություններում նախատավոր պայմաններ ստեղծվեցին զեղարվեստական գրականության, առ թվում նաև դրամատուրգիայի թեմատիկ-գաղափարական ու զեղարվեստական առանձնահատկությունների որակական փոփոխման համար: Միայն 1950-ական թթ. վերջին երեք տարվա ընթացքում նորագույն շրջանի հայ դրամատուրգիան հարստացավ Գ. Բոդյանի «Նույն հարկի տակ», Ալ. Արաքսանյանի «Վարդեր ու արյուն», Ս. Սարգսյանի «Նախդյան դայար բարդին», Ա. Գուլակյանի «Օրեր, մարդիկ անմոռաց» պիեսներով: Լյարևորն այն էր, որ ի տարբերություն նախորդ շրջանում գրված դրամաների, նոր պիեսների կենտրոնական դեմքը դարձավ կոնկրետ մարդը՝ հոգեկան ապրումներով, հույզներով, տենչներով: Չնայած վերոհիշյալ պիեսների կառուցվածքային խելություններին, դրանք որակվեցին որպես նոր խոսք թե՛ բովանդակային և թե՛ արվեստի առումներով:

Ն. Զարյանը՝ ինչպես պոեզիայի, արձակի և երապարկախոսության բնագավառներում, այստեղ ևս կատարեց նոր քայլ. գրելով «Արմաշեն» դրաման: Ժամանակի շունչը դարձած արվեստագետը այս պիեսում ևս պատկերեց առօրեական խնդիրներ, որոնք ունեին կարևոր նշանակություն երկրի տնտեսության զարգացման համար:

«Արմաշեն» պիեսի հիմքում գոյություն ունի սուր կոնֆլիկտ, որ տեղի է ունենում դրական և բացասական կերպարների միջև: Երկար տարիների փորձ ունեցող, պատասխանատու ղեկավարներ Սարգարյանն ու Մանասերյանը անուշադրության են մատնում գյուղում բերրատվության ավելացման խնդիրները: Նրանք ղեկավարելով կենտրոնից, չլին կարող իրենց կոնկրետ գործունեությամբ օգնել գյուղացիներին՝ բարձրացնելու բերրատվությունը: Պարզ է, նրանք որպես շրջկոմի աշխատակիցներ, միայն պետք է բավարարվեին հրահանգներ հղելով և վերադասին կեղծ տեղեկություններ հաղորդելով: Լյարևը ընթանում է առաջ, իսկ կոլտնտեսությունը դուրս է տեղում: Չեն ընդարձակվում խաղողի այգիները: Եվ ահա հանդես է գալիս շրջանի նորընտիր քարտուղարներից մեկը՝ Գալունցը, որ չի հաշտվում հնավուճ և անարդյունավետ գործելակերպի հետ:

Պիեսում հանդես է բերվում կոլտնտեսության նորընտիր նախագահ Արմանուշը, որը իրականացնում է ոչ թե հեկտարների ավելացման պլան-նախագիծը, այլ դնում է խաղողի բերրատվության ավելացման հարցը: Կոնֆլիկտը յեմանում է մի կողմից Սարգարյանի ու Մանասերյանի, մյուս կողմից՝ Արմանուշի միջև: Արմանուշին պաշտպանում է քարտուղար Գալունցը: Գյուղը մեծամասամբ պաշտպանում է Արմանուշի և Գալունցի նախագիծը, հաղթում է նորը, առաջավորը:

Հանրահայտ է .որ պիեսը, ինչպես քնութագրել է Մ. Գորկին, ամենից դժվար ստեղծվող ժանր է: Նրանում պետք է ընդգծված լինեն սուր բախումներ, ակտիվ գործողություններ, որոնց համապատկերի վրա էլ իրենց դրսևորեն կերպարները: Ն.Զարյանը նկատի առնելով դրամատուրգիական այս պահանջը, ստեղծել է սուր կոնֆլիկտ՝ նորի և հնի ներկայացուցիչների միջև: Բախման առանցքը Սարգարյանն ու Գալունցն են, որոնց շուրջը համախմբվում են մյուս գործող անձերը: Որպես դրական հերոս՝ Արտավազը Գալունցը լիարյուն է, ակտիվ, համոզիչ: Նա հնի դեմ պայքարում է, համոզված: Նրանից է կախված շրջանի թե՛ տնտեսական և թե՛ մշակութային առաջընթացն ապահովելու գործը:

Սարգարյանն ու Մանասերյանը կառուցված իրենց արժեքներն չեն նահանջում, ավելի են սրում կոնֆլիկտը: Բերենք քնութագրող մի երկխոսություն, որ տեղի է, ունենում գլխավոր կերպարների միջև.

ՄԱՆԿԱՆՅԱՆ - Մեզ այստեղ ընտրել են նրա համար, որ կատարենք պետական գործունեությունը: Մեր խնդիրը չէ քայքայելով կամակոր կանանց: Ղեկավարման արվեստը պահանջում է ստիպել, որ մարդիկ աշխատեն լավագույն կարգի կամսքին հավատալ:

ԳԱՆՈՒՆՆՅՑ - Ղեկավարման արվեստը սրահանջում է մարդկանց համոզել, որ նրանք աշխատեն գիտակցաբար:

Այսպես, Գալունցը առաջ է քաշում ղեկավարման իր սկզբունքը: Մարդիկ պետք է գործեն համոզված ու սրտանվիր:

Պինեսու գնալով ավելի են յեծանում հակաառաջությունները: Սարդարյանն իր համախոհների հետ կազմակերպում է և զբաղադրում Գալունցին, որը դրամատիկ վիճակների մեջ է ընկնում և չքոտորում իրեն հատուկ կամսքի անկողնում ուժը: Գալունցը պինսի հայտնված կերպարներից է: Նա ազնիվ է, արդարամիտ, նվիրյալ ամուսին է, հոգատար հայր, բարի ընկեր, միաժամանակ անտղոք հասարակական և մարդկային արատների հանդեպ: Սակայն հետաքրքիրն այն է, որ ի հանկալիչ Գալունցի, նրա կինը՝ Էմման, տարված է քաղերեսական հովերով, կշտամբում է ամուսնուն, որ չի ձգտում ավելի բարեկեցիկ կյանքի: Գալունցը ներկայացնում է բարեկեցիկ ստրկելու իր ընկալումը ու համոզմունքը. «Կա երկու տեսակի բարեկեցություն: Բաղբենու բարեկեցությունը սիրամարգի պղչ է, շրճի ու ծանր: Հազիվ բարչ է տալիս գետնի վրա: Իսկ մեր բարեկեցությունը, Էմմա, պետք է լինի թնձե, ինչպես թռչնի թևերը: Մանասեղանն իր սիրամարգի պղչը պահպանելու համար զոդում է Սարդարյանի առաջ և շարունակ գարմանում, սեղ ինչպես կարելի է Սարդարյանի հետ վիճել:

Սակայն Էմման հյուսել է կյանքի նկատմամբ իր կարծիքը և չի ընդունում ամուսնու խորհուրդը, և ղեռ ավելին, խորհուրդ է տալիս նրան, որ կոնֆլիկտի մեջ չստնի Սարդարյանի և Մանասեղյանի հետ Գալունցը, միևնույն է, արդեն ունի բարոյական իր ընկալումն ու մաքուր խղճի սեփական օրենքը:

ԳԱՆՈՒՆՆՅՑ - Ես քո խորհուրդները սրբությանբ կատարում եմ: Ասում եմ լվացվիր, լվացվում եմ, ասում եմ փողկապ փոխիր, փոխում եմ, ասում ես ինձ համբուրիր, համբուրում եմ: Ահա: (Հանքուրում է Էմմային):

ԷՄՄԱ - Ասում եմ Արա Գրիգորիչի հետ մի գժտվիր, գժտվում ես:

ԳԱՆՈՒՆՆՅՑ - Գա արդեն ուրիշ բան է: Ես ուզում եմ նրան օգնել: Իսկ նա այդ չի հավանում: Գալունցը չի հաշտվում քաղբենիության հետ, նա ուժեղ կամսքի և մաքրության կրողն է: Գրամայում Գալունցը միշտ գտնվում է կոնֆլիկտի շրջապատուրտի մեջ, սակայն նրա քննադատությունն ունի ընկերների օգնելու միտում:

Գրականագետ Արմվի Հունանյանը ժամանակին անդրադարձել է Ջարյանի այս պինսին և: Նա գտնում է, որ Գալունցը «պինսու զարծել է ոչ միայն «Լճակից», այլ որոշ իմաստով նաև փոխարինող» [1]

Մենք չենք բաժանում գրականագետի այս կարծիքը: Գալունցը իր քնավորությամբ, վարքով, գործունեությամբ պինսում սկզբից մինչև վերջը իրեն դրսևորում է որպես իր դիմագիծն ունեցող կերպար և չի նանմվում և չի կրկնում ոչ որի: Գալունցը կենդանի գժերով օժտված, ցայտուն կերպար է:

«Արմաշեն» պինսում ուշադրության արժանի կերպարներից է Արմանուշը: Չսայած գործողությունների ընթացքում դրսևորած նրա որոշ պասիվությանը, Արմանուշը քնավորություն է չիտակ, ուղղամիտ, համարձակ, աշխատասեր, ժողովուրդանվիր: Սարդարյանի ահաբեկիչ հրահանգների հանդեպ նա վճռական է, երբեք չի ցանկանում զբաղվել աշխատակությանբ: Նա հակադրվում է նաև կոլտնտնության նախկին նախագահ Արտուշ Հովսեփյանի խարեությանը: Արմանուշը սիրում է կարծեսին: Սակայն նշենք, որ նրանց սերը պինսում նկարագրված է մակերեսորեն: Արմանուշը հանուն հասարակական աշխատանքի, ասես մոռանում է սիրտ ջերմությունը:

«Արմաշեն» դրամայի հայտը բնութագրված կերպարներից են Սարդարյանը և Մանասեղյանը: Նրանք երկուսն էլ կոնֆլիկտի մեջ են և իրենց դրսևորում են կոնկրետ գործողությունների ընթացքում: Եվ Սարդարյանը, և Մանասեղյանը բյուրոկրատիզմի ներկայացուցիչներ են, ուստի չեն ընդունում կյանքում տեղի ունեցած փոփոխությունները անհատի պաշտամունքի քննադատությունից հետո: Աշխատանքի ինն ոճին կաշած, նրանք ապրաբում են նորի, առաջավորի դեմ: Քննադատելով Սարդարյանի հնավոճ և անօգուտ գործելակերպը, Գալունցն ասում է. «Ժողովուրդը ահա սրանք են: Այս այգեգործներն ու չանաքավորները: Դու մի օր հետաքրքրվի՛ ես սրանց կյանքով: Մի օր սնու՛ր՛ ես նրանց տները: Մի անգամ տեսն՛ր՛ ես այն հողը, որի վրա հրամայում ես այգի տնկել: Մի անգամ հարգե՛ր՛ ես. Բոշյան

Լեգիբար, դու հազար աշխօր ես վաստակել, ապա ինչու՞ եմ ման գալիս զնցոտիների մեջ: Հարցրե՛լ եմ Արմաշենի լավագույն բրիգադավար Բրուսյանին, ինչու՞ է հարթում քո սիակ տղան: Ժողովուրդը քեզ չի հետաքրքրում: Դու չես հասկանում, որ ժողովրդի բարեկեցությունը մեր բոլոր պլանների նպատակն է, որ մեր պլանները միջոց են այդ նպատակին հասնելու համար: Իսկ դու միջոցը դարձրել ես քեզ համար նպատակ, բուն նպատակը մարենել մոռացության: Որովհետև այդպես է սովորեցրել քեզ քո Բաբայանյանը»:

«Արմաշեն» դրամատում Սարգսյանը չի հրաժարվում իր սխալ գործելակերպից, նա չի կարող դատախարակվել: Սարգսյանը նսան է Ն.Ջարյանի «Փորձադաշտ» պիեսի կերպարներից Գառնակեղյանին: Գրականագետ և Գյուլնագարյանը նկատել է. «Գեղարվեստական առումով շատ հետաքրքիր մտահղացում է սա, որ ընդգծում է դրամատիկական երկերի ակտուալությունը: Զանի կան Գառնակեղյաններն ու սարգսյանները (իսկ նրանք ինչուս լինելու են, քանի որ սոցիալիստական բարոյականության լիակատար հաղթանակը ձեռք է բերվելու հասնա ու երկարատև պայքարի գծով) գալուցների աշխատանքը ծանր է լինելու, լի դրամատիկ սոսնձաներով և հենց այդ պատճառով դա ժամանակի խոշորագույն սխրագործությունն է»:[2]

«Արմաշեն» պիեսի կենդանի կերպարներից է նաև Մանասերյանը: Նա խարդախ է, գրպարտող, պաշտոնամոլ: Նրա ծառայությունը Սարգսյանին՝ քանկիտի վարմունք է: Ն.Ջարյանը Մանասերյանի կերպարը բնութագրելու համար օգտագործել է հետաքրքիր արտահայտամիջոցներ: Սարգսյանի վստահությանն արժանանալու համար Մանասերյանը Գալունցին միշտ դիմում է այսպես. «Ինձ երիտասարդ ընկեր եմ: Եթե Արամ Գրիգորիչը բան է ասում, դու բլրկնոտումդ գրիր, որ չմոռանաս»:

Մանասերյանը գրպարտում է Գալունցին և Արմանուշին Էմմային գայթակղելու համար: Եվ դա նրան հաջողվում է: Բայց ի վերջո պատռվում է նրա դիմակը, երբ Արմանուշը Էմմային պատմում է, որ Մանասերյանը շատերին խաբել է Տերյանից արտագրած իր սիրային քանդակներով:

Սարգսյանի և Մանասերյանի կերպարների միջոցով Ն.Ջարյանը զգուշացնում է հետևողականորեն պայքարել բոլոր այս երևույթների ու պայմանների դեմ, սրանք կարող են սարգսյաններ ու մանասերյաններ սնել:

Այս առումով «Արմաշենը» չի կորցրել արդիական հնչողությունը: Պիեսի հաջողության գրավականները քիչ չեն. Նրանում կան կերպարներ, որոնք թեկուզ էպիգոդիկ են, սակայն լիարյուն են: Դրանցից են Արտուշ Կովսեփյանը, Տիգրանը, վարդազարը, Լեգիբարը:

«Արմաշեն» պիեսը ուշագրավ գործ է՝ թեմարձարձած գաղափարի և թե՛ դրամատուրգիական առանձնահատկությունների առումներով:

Резюме

Как в поэзии и прозе, так и в драматических произведениях Н.Заряна отражена справедливая борьба нового и старого. Особенно явно она представлена в пьесе «Армашен», где присутствует острый конфликт, с помощью которого проявляются положительный образ - Армануш и отрицательный герой - Сардарян. Армануш с помощью Галунца борется за светлую и беспеченную жизнь крестьян, а Сардарян заботится лишь о своем личном благе.

Пьеса «Армашен», написанная в 50-ые годы XX века и сегодня не потеряла свою актуальность и может с успехом ставиться на сцене любого современного театра.

Ծանոթագրություններ

1. Ա. Հունանյան, «Արդի հայ դրաման», Հայպետհրատ, 1964, էջ 67:
2. «Գրական թերթ», 1963, N 18:

ԱրՊՀ, գրականության և ժողովուրդի կապի թանգրանտ

ԼՂ ՀԻՄՆԱՆՆԻՐՆ ՈՒ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՏՏՐ 1988 - 1991 թթ.

Ն. Վ. Աբրահամյան

Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ տասնամյակներով վարած՝ Ադրբեյջանի խտրական քաղաքականության արդյունքում 1988-ի փետրվարին ծայր առած ազգային-ազատագրական պայքարն ու նրա արտագոյումը պայմանավորեցին կարելի է քաժամակ երեք հիմնական փուլերի. առաջին փուլ, որն ընդգրկում է 1988-91թթ., երբ ԽՍՀՄ կենտրոնի գլխավոր քարտուղար Մ. Ա. Գորբոչովի հայտարարած՝ վերականգնման կուրսին հավատարիմ՝ Հայաստանի արգելաչափ հատվածը հրապարակայնության (ռազեոստ) սկզբունքով արտահայտվեց սայր հայրենիքին սիանայտու իր ցանկությունը: Եվ այդ ամենն արտահայտեց հանրաձայնվարային մշակութայի դասակարնության շրջանակներում այն աստիճան, որ Մոսկվայում ծնվեց հետևյալ ուղարգավ անկեղտը. «Армяне перестроить приняли все»:

Ու քանի որ աշխարհի մեկ վեցերորդում իր վերիշխանությունը հաստատած կոմունիստական բեռնապետությունն ազգային խնդիրների լուծման ժամանակ որպես սկզբունք չէր ընդունում ազգերի ինքրորոնում ու սեփական բախտն ու ճակատագիրը ինքիշխան տնօրինելու ժողովուրդների ազատ կամքը (դրա պերճախոս վկայությունն էին 1956թ.-ին Հունգարիայի, 1968-ին Չեխոսլովակիայի, 1979-ին Աֆղանստանի և 1981-ին Լեհաստանի հայտնի դեպքերը), ապա սրբախայան ազգային-ազատագրական պայքրի երկրորդ փուլ հանդիսացավ Արգայի ժողովրդի ղեմ Ադրբեյջանի սանձակերծած պատերազմը՝ 1992-94թթ., որը հանդիսանում է մեր նշված փուլերից երկրորդը:

Երկրորդ փուլն իր մեջ ընդգրկում է 1994թ.-ի մայիսի 12-ին Բեյրեկում ստորագրված՝ գինադադարի մասին համաձայնագրից մինչև մեր օրերը ոչ պատերազմ-ոչ խաղաղություն բնութագրով:

Քիմիական և ֆիզիկաքիմիական պրոցեսների մոդելները կարող են ստեղծվել ինչպես մակրոաշխարհի, այնպես էլ միկրոաշխարհի մակարդակի վրա: Մոդելավորումն անգնահատելի է ուսուցչի համար, քանի որ ուսուցման հենց առաջին քայլից քիմիան գործ ունի միկրոաշխարհի օբյեկտների հետ, օրինակ, ատոմների, քիմիական կապերի տեսակների, նյութի կառուցվածքի, էլեկտրոնիտիկ դիտման, քիմիական ռեակցիաների, տարածա-քիմիական պատկերների և այլ մոդելների հետ:

Առանձնակի նշանակություն ունեն լաբորատոր աշխատանքները, քիմիական արդյունաբերության մոդելները:

Արդ՝ վարժարանում կազմակերպվեց փորձական դաս, որի ժամանակ վարժարանի սաներին ներկայացվեց «Մետաղներ» թեման ամփոփ կերպով Microsoft Powerpoint ծրագրի օգնությամբ կազմված սլայդերի տեսքով: Տեսական նյութը ներկայացված էր նկարների, աղյուսակների և տեքստի միջոցով: Դրան գուցահետ քաղաքությունը տրվում էր նաև ծայրի միջոցով, որը հնարավորություն էր տալիս դասի ներկայացման ժամանակ աշակերտներին և լսել դասի բացատրությունը, և դիտել այն համակարգչի կրթմանի:

«Մետաղներ» թեման ներկայացվեց ինչպես ուսուցանող ծրագրի, այնպես էլ ստուգող ծրագրի թեստերի, առաջադրանքների ու խնդիրների միջոցով:

Նախ ներկայացվեց մետաղների դիրքը.

Քիմիայում մետաղ են կոչվում այն մետաղ-տարրերը և մետաղ-նյութերը, որոնք օժտված են բնորոշ մետաղական հատկություններով, իսկ տեխնիկայում այն պարզ նյութերը և համաձուլվածքները, որոնք էլեկտրականության և ջերմության հաղորդիչներ են, ունեն մետաղական փայլ, պլաստիկ են և այլն:

Եթե անկլոնագծից տաններ թորից աստատ (նկ.2), ապա պարբերական համակարգում անկլոնագծից վեր կունենանք ոչմետաղներ տարրերը, անկլոնագծից ներքև՝ մետաղ-տարրերը, իսկ անկլոնագծին սուտ տեղադրված տարրերը (օրինակ՝ Be, He, Ge) ցուցաբերում են նրկղիմի հատկություններ:

Ավելի ճշգրիտ նրանք պարբերական համակարգում տեղաբաշխված են հետևյալ կերպ՝

- 1) II պարբերության s տարրերը,
- 2) III պարբերության s տարրերն ու AI p տարրը,
- 3) IV պարբերության s և d տարրերը, ինչպես նաև գալիում (Ga) և գերմանիում (Ge) p տարրերը,
- 4) V պարբերության s և d տարրերը, ինչպես նաև ինդիում (In) և անագ (Sn), տարիք (Sb) p տարրերը .
- 5)

Նկ. 2

6) VI պարբերության s, p, d և f տարրերը At և Iո-ից բացի,

7) VII պարբերության առայժմ հայտնի բոլոր տարրերը:

Մետաղների ատոմների արտաքին էներգիական մակարդակում գտնվում են վտրը թվով էլեկտրոններ՝ հիմնականում 1, 2: Մետաղների ատոմները, ի տարբերության ոչմետաղների, ունեն համեմատաբար մեծ չափեր, որի պատճառով հեշտությամբ կորցնում են վայնետային էլեկտրոնները վերածվելով դրական լիցքավորված իոնների: Մետաղների ատոմները տարրական բացասական էլեկտրոններ չեն առաջացնում և ռեակցիաների ընթացքում էլեկտրոններ չեն վերցնում, այսինքն բացասական օքսիդացման աստիճան չեն գույաչանքում:

Մետաղների հատկությունները պայմանավորված են մետաղական կապով: Այն փոխազդեցությունը, որն առաջացնում է մետաղի ատոմների վայնետային էլեկտրոնների ընդհանրացված օրբիտալների և մետաղի իոնների սիյև, կոչվում են մետաղական կապ:

Մետաղների ֆիզիկական հատկությունները

- էլեկտրահաղորդականություն և ջերմահաղորդականություն
- Մետաղական վառ և անթափանցիկություն
- Պլաստիկություն
- Կարծրություն, հալման ջերմաստիճան և խտություն

Նկ. 3


Մետաղական կապը ապարտեղայնացված է, գործում է ոչ թել երկու կամ իր շուրջը գտնվող մի քանի ատոմների, այլ մետաղի կտորի թուր ատոմների միջև: Նրան բնորոշ է մետաղական քյուբիկացանցը, որի հանգույցներում գտնվում են մետաղի դրական իոնները՝ շրջապատված ազատորեն տեղաշարժվող վալենտային էլեկտրոններով: Մետաղական կապով է պայմանավորված մետաղների էլեկտրահաղորդականությունը, աչխնքն անգամ չնչին պլոտնցիվները) տարբերության դեպքում էլեկտրոնները կատարում են ուղղորդված շարժում:

Մետաղների էլեկտրահաղորդականությունը փոքրանում է հետևյալ շարքում.



Ջերմահաղորդականությունը սրայնանավորված է ազատ էլեկտրոնների շարժումակությամբ և իոնների տատանողական շարժմամբ: Դա փոխվում է նույն հաչորդակմանությամբ, ինչպես էլեկտրահաղորդականությունը: Մետաղներին բնորոշ է բարձր պլաստիկությունը՝ արտաքին ուժի ազդեցության տակ նրանց ձևափոխվելու ունակությունը, որը մնում է նաև ազդեցությունը դադարեցնելուց հետո: Մեխանիկական ներգործության հետևանքով մետաղի իոնների շերտերը տեղափոխվում են միմյանց նկատմամբ, սակայն նրանց միջև կապը չի խզվում, որովհետև այն կապված է ոչ միայն հարակից իոնի, այլ նաև հեռավոր իոնների հետ ընդհանրացված էլեկտրոնների միջոցով:

Պլաստիկությունը նվազում է



Մետաղներին յուրահատուկ է անթափանցելիությունը և մետաղական փայլը, որոնք ևս պայմանավորված են ազատ էլեկտրոններով:

Նրանց յուրահատուկ են նաև տարբեր հատկանիշներ (նկ. 3):

Խտությունը. ըստ խտության տարբերում են թեթև և ծանր տարրեր. այն մետաղները, որոնց խտությունը փոքր է 5 գ/սմ³-ից, կոչվում են թեթև, իսկ 5 գ/սմ³-ից բարձր խտություն ունեցողները՝ ծանր:

Ամենաթեթև մետաղը՝ լիթիումն է (0,53 գ/սմ³), իսկ ամենածանրը՝ օսմիումը (22,6 գ/սմ³):

Վալման ցերմաստիճանով էլ տարբերվում են ամենադուրահալը՝ սնդիկը (t_հ⁰=−38,9⁰C), ամենադժվարահալը՝ W (W=3390⁰C):


1000⁰C-ից բարձր հալման ցերմաստիճան ունեցողները անվանում են դժվարահալ, ցածրը՝ դյուրահալ:

Մետաղների կառուցվածքային կարևոր հատկություններից է կարծրությունը: Ամենակարծր մետաղը քրոմն է, ամենափափուկը՝ կալիումը:

Քիմիական սեպակիաներում մետաղները ցուցաբերում են միայն վերականգնող հատկություն, որպես արդյունք՝ միայն դրական լիցքավորված իոններ են առաջանում: Մետաղների վերականգնող հատկությունը արտահայտում ենք հետևյալ ընդհանուր հավասարմամբ՝



Մետաղները փոխազդում են ոչմետաղների հետ՝ առաջացնելով օքսիդներ, հալոգենիդներ, սուլֆիդներ, նիտրիդներ, ֆոսֆիդներ, կարբիդներ, հիդրիդներ, սիլիցիդներ (նկ. 5):



սուլֆիդներ



կարբիդներ



ֆոսֆիդներ




սիլիցիդներ





նիտրիդներ



հիդրիդներ



Այլկալիական և հողալկալիական մետաղները հեշտությամբ վերականգնում են H⁺ կատիոնները՝ ջրի հետ փոխազդելով:



Պակաս ակտիվ մետաղները ջրի հետ փոխազդում են միայն տաքացման պայմաններում և այս դեպքում առաջացնում են օքսիդներ՝




Ըստ ջրային լուծույթի վերականգնող ընդունակության աճի, մետաղները դասվում են մի շարքում, որը անվանում են մետաղների էլեկտրալարվածության շարք.

Li, K, Ca, Na, Mg, Al, Zn, Fe, Ni, Sn, Pb (H₂) Cu, Hg,

Ag, Au, Pt

Մետաղների ակտիվության շարքում շարքում ջրածնից ձախ տեղադրված մետաղները թթուների լուծույթից ջրածին են դուրս մղում, իսկ այ տեղադրվածները ջրածին դուրս չեն մղում: Օրինակ՝



Սա այն դեպքում, եթե թեթիվ ու մետաղի փոխազդեցությունից լուծելի աղ է ստացվում, իսկ խիտ H₂SO₄ և HNO₃ մետաղների հետ ջրածին դուրս չեն մղում:



Յուրաքանչյուր մետաղ աղերի ջրային լուծույթներից դուրս է մղում իրենից այ կանգնած մետաղը.

Ասածը ալկալիական և հողալկալիական մետաղներին չի վերաբերում, քանի որ նրանք փոխազդում են ոչ թե աղի, այլ ջրի հետ:

Մետաղները (Be, Al, Zn, Sn, Pb և այլն), որոնց հիդրօքսիդներն ունեն ամֆոտեր հատկություն, փոխազդում են և թթուների, և հիմքերի հետ:


Մետաղները բնության մեջ: Մետաղների ստացման ընդհանուր եղանակները:

Մետաղները բնության մեջ հիմնականում հանդիպում են այլ տարրերի հետ միացությունների ձևով, որպես կանոն՝ թեթև մետաղները քլորիդների NaCl, KCl, MgCl₂·6H₂O և այլն, նիտրատների NaNO₃, KNO₃, սուլֆատների MgSO₄·7H₂O, CaSO₄·2H₂O և այլն ֆոսֆատների Ca₃(PO₄)₂, Mg₃(PO₄)₂ և այլն, կարբոնատների CaCO₃, FeCO₃, MgCO₃·CaCO₃, սիլիկատների Na₂SiO₃, CaSiO₃, Li₂SiO₃ և այլն: Ծանր մետաղների միացություններն են՝ օքսիդները, սուլֆատները, կարբոնատները, օրինակ, Fe₂O₃, Fe₂O₃, MnO₂ և այլն: կարևորագույն հանք սուլֆիդներն՝ FeS₂ (պիրիտ), HgS (կինովար) ZnS ցինկի խաբուսակ, կապարի փայլ PbS և այլն:


Հանք կարբոնատները FeCO₃, ZnCO₃ մալաքիտը (CuOH)₂CO₃:

Ոչ ակտիվ այսպես կոչված ազնիվ մետաղները բնության մեջ հանդիպում են ազատ վիճակում, դրանք անվանում են բնածին մետաղներ: Օրինակ բնածին արծաթը՝ 13.5տ, ոսկին՝ 112կգ և այլն: Ըստ հանքերից մետաղների արդյունահանման եղանակաների տարբերում են հրամետաղագործության, ջրամետաղագործության և էլեկտրամետաղագործության եղանակները:

Հրամետաղագործությունը միավորում է այն եղանակները, որոնց հիմքում ընկած են բարձր ջերմաստիճանում հանքերից վերականգման վրա՝ CO, C, H₂, Al և այլ նյութերով.



Ջրամետաղագործությունը հիմնված է աղերի լուծույթներից մետաղների ստացման վրա: Հանքը մաքրում են դատարկ ապարից, և համապատասխան լուծիչի օգնությամբ մետաղը լուծույթ անց կացնում, ապա մետաղը աղից վերականգնում: Օրինակ՝ 0.5-1% Cu պարունակող հանքը մշակվում են H₂SO₄ -ով, ապա պղինձը դուրս է մղվում երկաթով:



Նիտրիդներ

$$3Mg + N_2 = Mg_3N_2$$

Տիտիդներ

$$2K + H_2 = 2KH$$

Նկ. 5



Էլեկտրամետաղագործությունն ընդգրկում է էլեկտրատարալուծման վրա հիմնված մետաղների ստացման եղանակների եղանակները: Այկալիական, ալկալիական մետաղները և Al-ը հիմնականում ստացվում է էլեկտրատարալուծման եղանակով:



Նետազ պոլիմրում նախատեսվում է էլեկտրոլիզի, մետաղների առանձին խմբերի (I, II, III գլխավոր ենթախմբերի) և Fe-ի ու նրա միացումների հետ ծանոթագույնը, ինչպես նաև պողպատի ու թուջի արտադրության ու մետաղների կռուզիայի ու նրա դեմ պայքարի եղանակների հետ:

Ուսումնական ծրագրերից հետո աշակերտներին առաջարկվեց ստուգիչ ծրագիր, թեստերի, հարցերի և խնդիրների ձևով:

Թեստերը

- 1) Սնդիկը հալվում է:
 - ա) -38,9Ե C-ում
 - բ) 200Ե C-ում
 - գ) 3000Ե C-ում
- 2) Նատրիումը և կալիումը պահում են
 - ա) ջրի մեջ
 - բ) նավթի մեջ
 - գ) սպիրտի մեջ
- 3) Մետաղների բնորոշ է.
 - ա) պլաստիկությունը
 - բ) ջերմահաղորդականությունը
 - գ) կարծրությունը
 - դ) ճիշտ են բոլոր պատասխաները
- 4) Նատրիումի մետաղը կարելի է ստանալ
 - ա) Na-ի օքսիդի ածխով վերականգնելով
 - բ) NaCl-ի հալույթի էլեկտրոլիզով
 - գ) NaCl-ի լուծույթի էլեկտրոլիզով
- 5) Ամենածանր մետաղը
 - ա) լիթիում
 - բ) երկաթ
 - գ) օսմիում

Ռիզ- հարցեր

- 1) Ո՞րն է ամենաթվարահալ մետաղը և այդ պատճառով էլ օգտագործվում է լուսատեխնիկայում:
- 2) Ո՞ր մետաղն է ամենալուրսահալը և նրա այդ հատկությունը օգտագործում են ֆիզիկական սարքերում: Ո՞ր այդպիսի սարքն են օգտագործում կենցաղում:
- 3) Բոլոր մետաղները ունեն սպիտակից մինչև գորշ գունավորում, բացառություն են կազմում 2-ը՝ մեկը ունի կարմրավուն նրանգ, մյուսը՝ դեղին: Անվանեք այդ մետաղները:
- 4) Անվանեք երեք մետաղներ, որոնք օդում չեն օքսիդում նոյնիսկ տաքացնելիս:
- 5) Ամենատարածված մետաղը:
- 6) Թեևավոր մետաղ:


Խնդիրներ

- 1) 5g պողպատը թթվածնի հոսքում այրելիս առաջացել է 0,11 CO₂ (ն.պ.): Որոշել ածխածնի զանգվածային բաժինը տվյալ նմուշում:
- 2) 228,8g երկաթի և նրա հատակի խառնուրդը վերականգնել են ջրածնով: Ռեակցիայի արգասիքները առանց թթվածնի մուտքի սչակել են աղայթթվով, որի դեպքում անջատվել է 8,96l գազ (ն.պ.): Որոշել սկզբնական խառնուրդի բանական քաղաղությունը:
- 3) Որոշել երկաթից, պղնձից և ալյումինից բաղկացած խառնուրդի բաղադրությունը, եթե այդ խառնուրդի 13g-ի վրա NaOH-ով ազդելիս անջատվել է 6,72l գազ, իսկ աղաթթվի ազդեցությամբ 8,96l գազ (ն.պ.):

Վասի վերջում օգտագործված մեթոդի արդյունավետությունը պարզելու նպատակով աշակերտներին առաջարկվեց պատասխանել հետևյալ հարցին՝

Դասի մատուցման ձևը Ձեզ բավարարե՞լ է:

1. Դասի ճատուցման ձևը Չեզ բավարարե՞լ է:



Նկ. 6

շատ ուսանելի են և զանկալի կլիներ, ար նմանատիպ դասեր հաճախակի կազմակերպվեն ինչպես րիմիայի տարբեր թմաններից, այլ նաև մյուս առարկաներից:

Հարցման Ենթարկված 96 աշակերտներից 88-ը (92%) պատասխանել են «այո», իսկ 8-ը (8%)՝ «ոչ» (նկ. 6): Մա կանհայտ կերպով ցույց է տալիս, որ դասի մատուցման վերը նկարագրված եղանակը արդյունավետ է, հետաքրքրում է աշակերտներին և օգնում է նրանց ավելի լավ ընկալել ուսուցանվող նյութն ու վեր հանել իրենց գիտելիքներն ու կարողությունները:

Աշակերտները հաճու են կան նաև դիտողություններով և առաջարկություններով: Դրանք մեծ մասամբ տվինիկական բնույթի էին և վերաբերում էին սյաղների, տեսքին, գույներին, ձայնին և ֆոնին: Մեծ մասն այն կարծիքին էին, որ այսպիսի դասերը

Резюме

В статье рассматривается вопрос о роли и эффективности компьютерного обучения на уроках химии.

В качестве примера приводятся обучающая и контрольная программы по теме «Металлы». Данные анкетирования прилагаются в виде графика.

Գրականություն

1. Մավինա Ա.Տ., «Եւ.ճանաչում եմ աշխարհը», Մ., 2001թ.
2. Խոսչենկո Գ.Պ., «Ձեռնարկ ԲՈՒՀ ընդունվողների համար», 1999.
3. Մաշքից Մ.Պ., «Ուսուցման կոմպյուտերացում», Մ., 1989.
4. Сомин Л.Е., Увлекательная химия, М., Просвещение, 1978.
5. Некрасова С.Н., Химия в школе, Вечер химических конкурсов, 2001, №6, стр. 84.
6. Մանուկյան Ա.Պ., Մանկավարժագիտություն «Զանգակ 97», 2002.
7. Մաշքից Մ.Պ., «Ուսուցման կոմպյուտերացում», Մ., 1989.

ԱրՊՀ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԻՐՈՒՅՆ ԱՃԵՈՍԱՆՔԻ
ՈՐԱԿԻ ԲԱԶՊԱՅՄԱՅ ՀԻՄՆԱՆՆԵՐԻՆԵՐԸ

Է.Զ.Բաղդասարյան

Հոյվածում մեր գիտականակաբաժնույան փորձի ու մտածելակերպի հիման վրա առաջին անգամ փորձել ենք գիտելանկատարածքին և համալիրային ձևով ներկայացնել ռազմողների ինքնության աշխատանքի որակի բարձրացման հիմնականիղիքները: Կարծում ենք, որ հոյվածում առաջարկված մեթոդական խոշորությունն ինչ, որ ավելի կարգալի և օգտակար լինել նրիտեսարդ սկսնակ դասավանդների համար:

Աճուրմային մեր ժամանակներում արմատական վերափոխումներն ու յարմարացումը սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում հանրակրթության բնագավառում, անհրաժեշտ պահանջ են դնում նաև բարձրագույն դպրոցի առջև՝ պատրաստել մասնագիտական խոր գիտելիքներով զինված որակյալ կադրեր, որոնք վաղը համալրելու են փորձառու մասնագետների շարքերը: Այդ պահանջներն ամենից առաջ իրականացնելու են բուհի դասավանդները, որոնց առաջնահերթ խնդիրն է արդյունավետ կազմակերպել ուսանողների արտասուսմանական գործունեության բազմազան ձևերից մեկը՝ ինքնուրույն աշխատանքը մասնագիտական գրականության վրա: Մանավանդ, որ այսօր բուհական կրթական համակարգում որակական փոփոխություններ են կատարվում: Երեմիտային համակարգով սովորելը նպատար է ուսանողների ակտիվության բարձրացմանը, անձնական պատասխանատվության ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի կատարելու ունակության զարգացմանը: Անշուշտ, բուհում բարձրորակ մասնագետ պատրաստելու խնդրի հաջող լուծումը մեծ չափով կախված է բարելիսից դասախոսական կազմի կողմից ուսանողների ինքնուրույն աշխատանքի ճիշտ ու խելամիտ կազմակերպումից, դեռ ավելին. սովորելու բոլոր հնարավորությունների ու հարմարությունների առկայության դեպքում էլ, եթե բազմակայում են ուսանողի բարելիսից, պատասխանատու մտնեցումն իր պարտականություններին, համար ու քրտնաջան ինքնուրույն աշխատանքը, ուսման ասպարեզում մենք ոչ մի արդյունքի չենք հասնի:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելիս պետք է նրանց հիշեցնել, որ քազմաթիվ ավանավոր հաջ գործիչներ, մտածողներ, գիտնականներ, գործունե հասնել են գիտության շատ բարձր մակարդակի, ոչ արնյան բարձրագույն դպրոցի միջոցով, որքան ինքնուրույն աշխատանքի, ինքնակրթության շնորհիվ: Բավական է հիշատակել ազգային մեծ բանաստեղծ Հովհ.Թումանյանի օրինակը: Միջնակարգ կրթություն ստանալ չկարողանալով, Մեծ Լոռեցին ինքնակրթությամբ ծով գիտելիքներ ձեռք բերեց: Նվարդ Թումանյանը «Հուշեր և գրույցներ» գրքում գրում է. «Բանտում հայրիկն ավելի շատ կարդում էր գրականությամբ էր պարտավում, քան իր գործերով ու դասավարությամբ հետաքրքրվում: Կախնքի մեջ ազատ ժամանակ էր գտել իր նվիրական գործով՝ ընթերցանությանը և գրականությանը զբաղվելու համար»¹: Հայ իրականության մեջ շատ օրինակներ կան/Մ.Թադևոսյան, Ղ.Աղայան, Նար-Ղոս և ուրիշներ/, երբ ուսանաձարավ մարդիկ, գրկված լինելով սխտեմատիկ կրթություն ստանալու հնարավորությունից, գիտելիքներ են ձեռք բերել գրքերի և ինքնակրթության միջոցով: Հայագիտության նրախտավորների ուսանելի օրինակը կենսական անհրաժեշտություն է յուրաքանչյուր ուսանողի համար:

Բարձրագույն դպրոցում մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու հիմնական նղանակներն են, մի կողմից՝ դասախոսություններ, սեմինար և այլ կարգի պրակտիկ ուսումնական պարասմունքները, մյուս կողմից՝ ուսանողի ինքնուրույն աշխատանքը, մասնավորապես գրքով:

Դասախոսությունը գիտելիքներ հեղորդելու հիմնական մեթոդն է բարձրագույն դպրոցում: Յուրաքանչյուր դասախոս պետք է գիտակցի, որ լավ կարգացրող դասախոսություններն ուսանողին ուղեկցում են դեպի գիտություն, պատկերացում տալիս մասնագիտության տվյալ բնագավառի մասին, արջանցնում ուսանողի միտքը նրա մեջ ձևավորում ինքնուրույն որոնողական, հետազոտական աշխատանք կատարելու ունակություններն ու կարողություններն: Հաջողությամբ կարողացված, բովանդակալից դասախոսությունն ուսանողին մղում է դեպի գրքերի աշխարհ, պահանջում խորագված ու համակարգված ինքնուրույն աշխատանք: Որպեսզի ուսանողները հիտունան ինքնուրույն մտավոր աշխատանքներ կատարելու մեջ, անհրաժեշտ է, որ դրանք

սկզբնական փուլում իրագրվեն տվյալ առարկայի դասախոսի ղեկավարությամբ իսկ հայտող փուլում ուսանողի ինքնուրույն նախաձեռնությունները:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետ կազմակերպումը պահանջում է, որ նրանք ունենան գործողությունների, գործելակերպի հստակ պատկերացում: Նրանք պետք է որոշակիորեն իմանան. թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է հետապնդում այն, ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը, երբ են ավարտելու: Այդ տեսանկյունով էլ առարկայի դասախոսը, ուսանողի ցանկացած ինքնուրույն աշխատանք /անմիջաբար գործնական, լաբորատոր պարապմունքներ, աշխատանք գրքով և այլն/հանձնարարելից առաջ պետք է ունենա շատ պարզ ու որոշակի պահանջներ, որտեղ արտացոլվում են ուսանողի ինքնուրույն աշխատանքի կատարման ուղղությունները, որը անշուշտ կնպաստի գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը: Մտեղագործաբար աշխատող դասախոսները/մայր բուհի պրակտիկայում առկա սերնդի ներկայացուցիչները Գ.Անտոնյան, Ա.Ներսիսյան, Գր Սողոմոնյան, Յու Անատուպյան, Լյ Ռավոյան, այսօր մեր շարքերում՝ Ստ.Դադաբյան, Ա.Այսիբաբյան, Գ.Տարուբյուրյան, ՕՖ.Ռաբայան, Ան.Այապյան, Լ.Գրիգորյան և շատ ուրիշներ՝ իրենց դասախոսություններն այնպես են կատարում, որ դրանք սահմաններից դուրս են փոխադրում ուսանողների ճանաչողական գործունեության շատ ծեծեր՝ մասնավորապես ինքնուրույն աշխատանքը սկզբնաբեկումների վրա: Անշուշտպես պետք է ուղեցույց լինի սկսնակ դասախոսների համարի դեպ նշեմ, որ նշված դասախոսները դասավանդել են նաև տեղերիս հինիսակին: Մեզ համար ուսանելի է նաև հայ մանկավարժացետ Տներիկ Մախչանյանի այն դրույթը, որ յուրաքանչյուր շրջանակներից ուսումնական գործընթացի ադապտիս ելքն առավել են անհրաժեշտ է: Բանի որ շատ ուսանողների համար դասավորություններ գործընթացում ծնված ճանաչողական հետաքրքրությունը դառնում է ուսանողի ինքնակրթության հզոր լսյան՝:

Յուրաքանչյուր ուսանող պետք է խորապես գիտակցի, որ իսկական ուսուցիչ, գիտության տիրապետումը պահով ինկվարման գործընթաց չէ, որի ընթացքում դասախոսը պարտադրյալ գիտելիքները կարող է լցնել ուսանողի գիտելիք, առանց վերջինիս կողմից կատարվող ակտիվ մտավոր աշխատանքի: Գիտության տիրապետումը պահանջում է լուրջ համառ. քրոնապայան ու տեսական մտավոր աշխատանք, իսկ մտավոր աշխատանքը մարդկային աշխատանքի ամենաբարդ և ղվվարին տեսակներից մեկն է: Մեր ժամանակի ուսանողը միշտ պետք է հիշի հանճարելի մտածողների այն դրույթը, որ գիտության մեջ չկա լայն ճանաչարքի, և միայն նա կարող է հասնել գիտության շողոթուն գագաթներին, ով, շարափնելով հոգնածությունից, մազգում է նրա քարքարուն արահետներով: Դա պետք է ուղեցույց լինի յուրաքանչյուր ուսանողի համար: Ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է երկու կարևոր հանգամանքով: Առաջին՝ ուսանողների մեջ ձևավորել պատասխանատվության գգացում, քարեխիզ վերաբերմունք դեպի իր պարտախոսությունները՝ պարտաճ մակարդակով գրի առնել դասախոսությունները և խելամուտքն պատրաստվել սեմինար, գործնական պարտավունքներին: Այս ղեկարում ուսանողները դասախոսի հանճարարությամբ կամ ինքնուրույն նախաձեռնությամբ ուսումնասիրում են ուսումնական թեմաներին առնչվող հասնապետական գրականություն, կոնսպեկտավորում այն գիտելիքները, որոնք չկան դասագրքերում: Նրանք իմաստավորում, ընդհանրացնում են նոր յուրացված գիտելիքները, կիրառում պրակտիկայում: Կան ուսանողներ էլ, որոնք մտավազուն դեպքում բավականալով միմիայն դասախոսություններ լսելով և դասախոսությունների կոնսպեկտների տնտրները անգիր անելով, բուհից իրենց հետ չեն տանում ոչ լուրջ ու հիմնովին գիտելիքներ, ոչ էլ բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո համակարգված իրենց վրա չեն աշխատում, ինքնակրթությամբ իրենց գիտելիքները չեն ընդարձակում, որի շնորհիվ էլ ինքնուրույն ճաշակ, հմտություն ու սովորույթ չեն մշակում, ինչը և խանգարում է իսկական մանկավարժ դառնալուն:

Ինքնուրույն աշխատանքի արդյունավետ կազմակերպման երկրորդ կարևոր պայմանն ուսանողների ստեղծագործական աշխատանքն է: Գրքի վրա: Ականավոր մանկավարժ էլ Ա.Սուլիստ լինակին իրավագիտքն անտանանշում է, որ գիրքը և առաջին հերթին դասագիրքը, գիտելիքների հարցատ, անապատ աղբյուր է, ուսանողի համար, գիրքն ուսանողի երկրորդ ուսուցիչն է, բարեկամը, օգնականը: Եթե ուսանողը, ապագա սկսնակ ուսուցիչը, թեկուզ մեկ օր կանգ է առնում իր մտավոր աճում, նա դադարում է գիտելիքների ջահ լինելուց և իր սաների, և մեծահասակ աշխատավորների համար: Ադայանը խորիմաստում է. «Գիրքը եղել է մնում է մարդու լավագույն բարեկամն ու խորհրդատուն»:

Գրքով ինքնուրույնաբար աշխատել կարողանալը ուսանողի կարևորագույն հատկություններից մեկն է: Առարկայի դասախոսը պետք է լավ իմանա, որ ծրագրված, նպատակային ձևով գրքի վրա աշխատելիս ուսանողը պետք է կարողանա իր միտքը գաղափարող հիմնահարցի, հարցի, թեմայի ուսումնասիրության, մշակման համար գտնել, ընտրել ամենաանհրաժեշտ, ամենակարևոր, գիտական տեսակետից հնարավորին չափ գրականություն, աղբյուրներ: Իսկ ի՞նչ եղանակներով ուսանողը պետք է սիստեմատիկ քրտնապան աշխատանք կատարի գրքի վրա ու յուրացնի

ուսումնական նյութի բովանդակությունը: Այդ տեսանկյունով էլ մեր փորձի ու մտահղացումների հիման վրա առաջարկում ենք մտանցիկական գրականության կրթականության ինքնուրույն աշխատանքը պահպանելու մի շարք ուղղություններ, մեթոդական խորհուրդներ, որը կարծում ենք, ինչ որ չափով կօգնի երիտասարդ ու սկսնակ դասախոսներին արդյունավետ կազմակերպելու ուսանողների ինքնուրույն աշխատանքը գրքի վրա:

Ըստ ընդունված ուսանողի հիմնական խնդիրներից մեկը գիտական գրականության վրա աշխատելու մեթոդիկային տիրապետելն է, պրահաչտի, համակարգված ընթերցանության կարողություն ու սովորություն մշակելը: Հետևաբար դասախոսը պետք է գիտակցի, որ առաջին կուրսանիս իր ուսումնասույթյան բոլոր տարիներին գործ է ունենալու գիտական գրականության հետ: Նա աշխատելու է գրքերի վրա թե՛ դասախոսության նյութերը մշակելիս, թե՛ սեմինար պարապմունքներին պատրաստվելիս, թե՛ դասընթացային, ավարտական աշխատանքներ գրելիս ու պետական քննությունների նախապատրաստվելիս: Ուրեմն, պետք է խելանտորեն պլանավորել ուսանողի ուսումնական և արտասուսմանական գործունեությունը՝ ինքնուրույն աշխատանքները:

Յուրաքանչյուր դասախոս պարտավոր է թե՛ գտնախոսության, և թե՛ սեմինարների ընթացքում արթնացնել ուսանողի միտքը, ասիպե՛ն նրան խորհել տվյալ առարկայի վերաբերյալ անհրաժեշտ գրականության շուրջ և յուրացնել նրա բովանդակությունը: Նպատակալույց կազմակերպելով ուսանողի ինքնուրույն աշխատանքը գրքի վրա, պետք է նրան մղել անհրաժեշտ հետևության, խորապես գիտակցել տալ, տոկունության, ուժեղ կամրի, դրանց դաստիարակության նշանակությունը: Արդյունավետ ուսման, գիտությունների տիրապետման համար առանձին դժվարություն չի սպասանվում, քանի որ ուսումնական ծրագրով յուրաքանչյուր առարկայի գծով նախատեսված են հիմնական և լրացուցիչ գրականության ցանկեր: Դրանից բացի յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության հետ կապված շատ դասախոսներ հանձնարարում են պարտադիր մշակվելիք գրականության ցանկը:

Յուրաքանչյուր դասախոս պետք է ուսանողներին սովորեցնի, թե՛ ի՞նչպես պետք է օգտվել գրքից: Գրքի վրա աշխատանքը ներառում է չորս հիմնական փուլ: Առաջին՝ նախնական ծանոթություն գրքի, նրա առանձին բաժնի կամ թեմայի բովանդակության հետ: Տվյալ դեպքում կարգադրի առաջ խնդիր է դրվում ընդգրկել գրքի կամ նրա բաժնի բովանդակությունն ամբողջությամբ վերցրած: Երկրորդ բնագրի այդ նախ խորագրված ընթերցանությունների ընթացքում ուսանողը պարտավոր է յուրացնել հիմնական դրույթներ և գլխավոր մտքերը, վերլուծել հեղինակի բերած փաստարկները, ապացույցները և հետևությունները: Երրորդ՝ կարդացածի պլանի կազմում: Չորրորդ՝ թե՛գիտների կամ կենսակերպերի կազմում:

Ուսանողների համար կարողացածի/ինչպես և դասախոսությունների/ գրառման ամենատարածված ձևը կոնսպեկտն է: Օրինակ, իմ դասախոսությունների ժամանակ ես ուսանողներին սովորեցնում եմ, որ կոնսպեկտը կարդացածի հիմնական բովանդակության համառոտ, ամբողջական ու կազմակերպված շարադրանքն է, որն իր մեջ ընդգրկում է հետազոտվող թեմայի հիմնական դրույթների համառոտ ձևակերպումները թե՛գիտների ձևով: Թե՛գիտները հանդիսանում են բնագրում արծաժվող հարցերի/պլանի առանձին կետերի /հավերժ ու սպառչ պատասխանները: Համապատասխան սկզբնաղբյուրից կազմվելով թե՛գիտներ, ուսանողներին ցույց են տալիս, որ ամեն մի թե՛գիտ, հանդիսանալով առանձին մի հարցի պատասխան, իրենից ներկայացնում է տրամաբանական մի ամբողջություն դրա հետ միասին խմատով շարկապելով նախորդ և հաջորդող թե՛գիտների հետ: Ուսանողներին նաև պարզաբանում են, որ թե՛գիտներ կազմելու աշխատանքի արժեքավոր կողմն այն է, որ դրա միջոցով խիստ կերպով կրճատվում է գրառումների ծավալը, ուսանողը սովորում է ամելի խոր կերպով մշակել բնագիրը, նրա միջուկը, դուրս բերել իր բառերը և սեղմ ոճով ձևակերպել:

Ուսանողը կարող է ոչ միայն մշակված որևէ գրքի, հոդվածի թե՛գիտները կազմել, այլև մի շարք աղբյուրների մշակման հիման վրա կազմել իր գեկուցման, ռե՛ֆերատի թե՛գիտները:

Ընթացի այդ դասախոսությունների ժամանակ ուսանողներին սովորեցնում են նաև գրքով աշխատելիս մեթոդական գրառման անհրաժեշտ ձևերը: Որպես կանոն, դրանք շեն հանդիսանում գրառման ինքնուրույն ձև, նրանք բերվում են կոնսպեկտի, երբեմն թե՛գիտների մեջ: Մենք մեթոդիկական ենք դիմում այն դեպքում, երբ անհրաժեշտ ենք համարում հեղինակի այս կամ այն միտքը կամ ձևակերպումը տալ քառագիծին, առանց որևէ փոփոխման:

Համաձայնարարված լրացուցիչ գրականությունից նոր ձևեր բերված գիտելիքները կայունացնելու, համոզումներների վերածելու համար կազմակերպում են սեմինար պարապմունքներ, քանակները, պրակտիկ աշխատանքներ: Ուսանողները հանդես են գալիս գրավոր ելույթներով, մշակված թե՛գիտներով ու ռե՛ֆերատներով: Դրանք նպատակ ունեն օգնել ուսանողներին՝ խորն ուսումնասիրելու դասընթացի տեսական հարցերը, սկզբնաղբյուրներն ու հանձնարարված գրականությունը, ինչպես և աշխատելու դասախոսությունների նյութերի վրա: Այդ ժամանակ ուսանողներն արդեն սովորում են

տրամաբանորեն մտածել, վերլուծել և ընդհանրացնել փաստերը, անել համապատասխան եզրակացություններ: Հիմնականում սեմինարների ընթացքում պետք է գերազանցապես ուշադրություն դարձնել այն հիմնահարցերին, որոնք խոր ու բազմակողմանիորեն չեն լուսաբանվել դասախոսությունների ընթացքում: Դրա համար էլ սեմինարը չպետք է կրկնի դասախոսությունը՝ ինքնին պահպանելով որոշ դրույթներ:

Ուսանողների կողմից վերը նշված ինքնուրույն բոլոր աշխատանքները ղեկավարում է տվյալ առարկայի դասախոսը: Նա ժամանակին կիրառում է վերահսկողության մանկավարժական պայմանները՝ անհատական բնույթը, սիստեմատիկությունը, օբյեկտիվությունը, պահանջների միասնությունը և այլն /ուղղում ուսանողների սխալները, տալիս խորհուրդներ և ցուցումներ: Ըստ ամենայնի պարզաբանում է անհատականի հարցերը, ձգտում այն բանին, որ ուսանողներն իրենք ամփոփեն ու վերլուծեն իրենց կատարած աշխատանքները, նկատեն թերությունները, բացթողումները և կռահեն, թե առաջիկայում ինչպես են կատարելու նման աշխատանքներ, ինչպես են ապահովելու ավելի բարձր արդյունք: Այսպիսով, ուսանողների ինքնուրույն աշխատանքը սկզբնաղբյուրների վրա արդյունավետ կարող են լինել միայն այն դեպքում, եթե դասախոսը մշտապես հետևի դրանց կատարման ընթացքին, պատշաճ մակարդակով կիրառի մանկավարժական ներգործության մեթոդները՝ խրախուսանք, համոզում և այլն/, ոգևորվի կատարվածով, ոգևորի նաև ուսանողներին, մշտապես պահպանի մանկավարժական տակտը, հատկապես հատուկ բարձրակարգություն ցուցաբերելու ուսանողների սխալն ուղղելու հարցում, իմանալ յուրաքանչյուր ուսանողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, նրա բնավորությունը, ընդունակությունները, տրամաբանությունը և ստեղծել այնպիսի նպատակովր պայմաններ, որ յուրաքանչյուր ուսանող կարողանա ինքնուրույն աշխատել գրքի վրա, և խորանա իր մասնագիտության մեջ:

Իհարկե, ամսագրային հոդվածի շրջանակներում հնարավոր չէ տալ քննարկվող հիմնահարցի ամբողջական գիտամանկավարժական վերլուծությունը: Լրարծում ենք, որ այն հատուկ ուսումնասիրության թեմա է, որին էլ կանդադառնանք մեր հետագա հետազոտական աշխատանքներում:

Резюме

В данной статье нами впервые предпринята попытка на основе научно-педагогического опыта и творческих исследований представить проблемы повышения уровня самостоятельной работы студентов. Как нам кажется, предложенные в статье методические советы в какой-то мере могут быть полезны для начинающих преподавателей.

Գրականություն

- 1 Ղ.Աղայան, Խորհրդածություն դաստիարակության վերա, հատ.4, Երևան, 1963:
- 2 Նվ.Թումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969:
- 3 Մ.Մանթրոսյան, Ռիսանդի ինքնուրույն աշխատանքը գրքի վրա, Երևան, 1954:
- 4 Հ.Մախչանյան, Հանուն ուսուցման բարձր որակի, Երևան, 1986:
- 5 Դ.Մ.Բորիսովսկի, Վ.Սուխոմլինսկի, Երևան, 1987:
- 6 Ա.Առտառյան, Գրքի վրա ինքնուրույն աշխատանքի ձևերը, Երևան, 1982:
- 7 Գ.Հարությունյան, Մանկավարժական մասնագիտության ներածություն, Ստեփանակերտ, 2002:

Ծանոթագրություններ

- 1 Տես, Նվ.Թումանյան, «Հուշեր և գրույցներ», Երևան 1969 էջ 62:
- 2 Տես, Հ.Մախչանյան, Հանուն ուսուցման բարձր որակի «Մանկավարժական բռն» բաժինը, Երևան 1986, էջ 99-112:
- 3 Մ.Մանթրոսյան, Ռիսանդի ինքնուրույն աշխատանքը գրքի վրա, Երևան, 1954, էջ 6:
- 4 Դ.Մ.Բորիսովսկի, Վ.Սուխոմլինսկի, Երևան, «Որպես» հր., 1987, էջ 158:
- 5 Ղ.Աղայան, «Խորհրդածություն դաստիարակության վնտա» հատ. 4, Երևան, 1963, էջ 67:

ԱրՊՀ, սանկավարժության և հոգեբանության ամբիոն

ԴԱՍԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԹՆԵՐԸ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԱԿԱՆՈՒՅԹՆԵՐԻ
ԴԱՍՏԻՆՐԱԿՉԱԿԱՆ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա.Ռ.Ռադդասարյան

Հայաստանի Հանրապետության հանրագիտարանում (2003թ. հ. 1) ավանդույթը (լատ. «traditio», բառազի՝ հաղորդում) սահմանված է որպես պատմավեպերում կազմավորված և սերնդն սերունդ հաղորդվող սովորույթ, կարգ, վարքի չափանիշ: Ավանդույթները լինում են առաջադիմական և հետադիմական: Օրինակ, առաջադիմական ավանդույթներից են հայրենասիրական՝ մարտական ավանդույթները, որոնք առաջացել են հանուն ազատության և ազգային անկախության ժողովրդի մղած պայքարի ընթացքում: Ավանդույթները լինում են աշխատանքային, քնտանեկան և այլն: Հետադիմական ավանդույթներից են գեղային և ավատատիրական հարաբերությունների մնացուկների, ընտանիքում և հասարակության մեջ կնոջ իրավագույր վիճակի հետ կապված ավանդույթները:¹ Անշուշտ, ժողովրդական ավանդույթների հազարամյա հարուստ փորձը, որտեղ խտացված են աշխատավոր մարդկացի լավագույն հատկությունները, մեծ դեր են կատարել հասունացող սերնդի դաստիարակության համակարգում:

Հայտնի է, որ հասարակությունը իր զարգացման փուլերում սերնդն սերունդ փոխանցում է իր կուտակված փորձը: Անհնար է ճշտորեն որոշել անող սերնդի դաստիարակության խնդիրները, առանց հաշվի առնելու և օգտագործելու այն ամեն դրականն ու արժեքավորը, որ կուտակվել է մարդկությունը:

Առաջադիմական ավանդույթների դաստիարակչական դերի մասին արժեքավոր մտքեր են արտահայտել դասական մանկավարժներ Յ. Ա. Կոմենսկին, Ի. Հ. Պլատոնովը, Այ. Գիսերովը, Կ. Դ. Ուշինսկին և ուրիշներ: Օրինակ, ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին գրել է. «Մարդու բնավորությունը ձևավորվում է բնական և հոգեկան տարրերից: Բնատուր հատկությունները և կյանքում ձեռք բերած համոզմունքները, սովորույթները միախառնվելով դառնում են բնավորություն, նրբ փոխարկվում է սովորույթի, դա էլ հենց այն պրոցեսն է, որի միջոցով համոզմունքը դառնում է հակում և միտքը փոխարկվում գործին»:² Ուշինսկին միաժամանակ մատնանշում է, որ դաստիարակել ուժեղ կամք և տոկոսը բնավորություն, նշանակում է դաստիարակել կայուն, չտատանվող բնավորություն, որ անկաշիտորեն կապված է միտանական ավանդույթի, բարոյական նորմաների և սովորույթի մշակման հետ:

Ժողովրդական ավանդույթների հավաքման ու օգտագործման մեծ չառաջով էր շուտ ականավոր գյուղ և մանկավարժ Լ. Ն. Տոլստոյը: Նա առաջադիմական ավանդույթների ու սովորույթների մեջ տմննում էր այն հոգևոր ուժը, որը դաստիարակչական մեծ դեր է կատարում: «Բարոցում ինչ-որ մի բան կա,- գրում է Տոլստոյը,- որը անորոշ է ուսուցչին և մանկավարժական գիտությանը, դա դարձի ոգին է, որը հանդիսանում է հայտը ուսուցման և դաստիարակչության պայմանը, և հեշտությամբ մի աշակերտից փոխանցվում է մյուսին»:³

Ժողովրդական ավանդույթների դաստիարակչական նշանակության հիմնահարցը հետաքրքրել է նաև հայ դպրոցի ու մանկավարժության ասպարեզի ականավոր գործիչներին: Այսպես, օրինակ, մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանը գտնում էր, որ ամեն մի ուսուցում ու դաստիարակություն պիտի համապատասխանի ժողովրդի ոգուն, վիճակին ու պատանջմունքներին: Իսկ ժողովրդական ոգին արտացոլված է նաև ավանդույթներում, ազգային սովորույթներում, բանասիրական ժողովրդական ստեղծագործություններում, որոնց հաճախակի պիտի դիմել կրթադաստիարակչական նպատակներով: Բարձր գնահատելով ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքների կրթադաստիարակչական նշանակությունը, Աբովյանը նախառակ ուներ դրանք գրի առնել. «Լույս աշխարհի հանել» նախ՝ որ դրանք չկորչեն և ապա օգտագործվեն գալիք սերնդի կողմից: «Մուրազս հենց էսա էլի, որ գնամ գիշեր-գիշերն ընկնիմ գնորգնդ ու մեր ազգի արած բաները

¹ ՀՀ հանրագիտարան, հ. 1, Նրևան, 2003, էջ 200

² Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական բնույթի նկեր, հ. 1, Նրևան, 1958, էջ 138

³ Л. Н. Толстой, Педагогические сочинения, изд. АПН РСФСР, Москва, 1948, с. 158-159

հավաքում գրեմ»:¹ Արքովյանը ճանապարհորդների և գրեստաշրջիկների հետ գյուղից-գյուղ անցնելու, հայրենիքի ամենահեռավոր անկյունները հասնելու և ուսումնասիրելու, թե՛ ինչպիսի կյանքով են բարրով է ազդում, ժողովուրդը, ինչ բարոյական անատարտ ավանդույթներ ու սովորույթներ են ավերակնդվել նրա մեջ: Այժմեական հնչեղություն ունի հայ դեմոկրատ-մանկավարժ Արքովյանի այն դրոյսը, որ ազգային դարոցներում պիտի պահել ավանդույթների գրանցման հատուկ մասյան, այն բարմացնել տարեցտարի ստեղծվող նոր ավանդույթներով և փոխանցել սերնդից սերունդ: Նա ուսումնասիրել է հայ շինավարչի ծանր, չարքայ կյանքը, տառնտերների ու շինուկիների դեմ մղած նրանց պայքարը Արքովյանը անգաղտում հավաքել է «ժողովրդի խոսքն ու գրույցը» առասպելներ մշակել, ռուսերենից կամ գերմաներենից թարգմանել, փոխադրել, թայց այնպես, որ «խախի սրտով լինի»: Ժողովրդական «չան գյուլումների» նմանությամբ նա հրատում է, բայթթների շարքը: Այդ թղոյը նա խմբավորում է իր «Պարսպ վախտի խաղալիք» գրքի մեջ, որ այսօր էլ հետաքրքրությամբ են կարդում մանուկ ու պատանի ընթերցողները: Արքովյանի հանդես բերած հետաքրքրությունը նպատակ է ունեցել ոչ միայն վեր հանելու այն, ինչը ստեղծել է Ժողովուրդը, այլ նաև ընդգծելու ավանդույթների ու սովորույթների դաստիարակական դերը, ինչպես իր ժամանակի, այնպես էլ գայիր սերունդների համար:

«Հայ ուսուցիչների ուսուցիչ» Ղ.Աղայանը ժողովրդական մանկավարժություն՝ Լքնմանկավարժության կենդանի մարմնավորումն էր: Իր կազմած դասագրքերում, տեսական և մեթոդական հոդվածներում Աղայանը բարձր է գնահատել ազգային ավանդույթների, ավարույթների, բանահյուսական նյութերի կրթադաստիարակական դերն ու նշանակությունը: Նկատի ունենալ հատկապես Աղայանի «Ուսումն մարմնի լեզվի» դասագրքերը, բազմավաստակ պատմաբան Լեոն Գրել և, որ այդ դասագրքերի շնորհիվ հայ դպրոցը դարձավ ազգային ոչ միայն լեզվով, այլև ոգով:² Նա առատությամբ անթող խորձերով հայ դպրոցը լցրեց հայ ժողովրդի, հայ գյուղի կյանքը ավանդույթները, բանաստեղծության ոգին, ստեղծագործական թուփը: Հայ ընտանիքի, հայ ժողովրդական ինքնուրույնության, հայ ժողովրդական կրթության ոգին տմոխներից էր Ղ. Աղայանը: Նա առանձնահատուկ շեշտադրել է ազգային ավանդույթների դաստիարակական դերը անող սերնդի դաստիարակության գործընթացում:

Ազգային ավանդույթների դաստիարակական դերի մասին արժեքավոր դրույթներ են գարգացրել նաև հայ գրական-հասարակական գործիչները: Այսպես, օրինակ, Միք. Նալբանդյանը շեշտադրում է հատկապես առաջադիմական ավարույթների դերը բարոյական դաստիարակության, ընկերության դաստիարակության գործում: Նա դաստապարտում է նախնայությունը, դրվախտում ընկերասիրությունը, գրելով. «այնտեղ, ուր չկա կրթություն և դաստիարակություն, չի կարող լինել ընկերական կյանք, իսկ ուր չկա ընկերական կյանք, այնտեղ թագավորում են միմյանց բաժանող և հեռացող նսական սկզբներ, որի հիմքի վրեա ոչ թե միայն բռն չի շնչվում, այլ հառաչուց շինվածները ևս քանդում են»:³ Անհնամար գործիչը քննադատել է նրանց, ովքեր ազգային ավանդույթները կապում էին միայն թագավորների հետ: Նա ցույց է տալիս որ առաջադիմական ավանդույթները, սովորույթները աշխատավոր ժողովրդի ոգու, կեցության ու պանհանջմունքների արտահայտությունն են և փոխանցվում են դարեդար:

Ժողովրդական ավանդույթների դաստիարակական դերը բարձր գնահատելով հայ ժողովրդի մեծ իանաստեղծ Հովի. Թումանյանը, այն համարել է ժողովրդի «հանձարի». նրա ոգու և մտքի, ազգային քնավորության, աշխատանքի ու շնորհի լավագույն ծնունդ, այն աղբյուրը «ոտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ գորհաս»: Թումանյանը գտնում է, որ ավանդույթներն ու սովորույթները իրենց մեջ արտացոլում են բարոյական այնպիսի նորմեր ու հատկություններ, որոնք միանգամայն ընդունելի են հասունացող սերնդի բարոյական դաստիարակության համար: Հայրենասեր մեծ բանաստեղծը «սի երկու խորհուրդ մեր գավառական մտալին» հոգվածում խորհուրդ է տալիս հավաքել, գրի առնել ու հրատարակել ժողովրդի անգին գանձերը: Չէ՞ որ «ապագա սերունդը... շնորհակալ կլինի ձեռնահից»:⁴

Ժողովրդական ավանդույթների դաստիարակական նշանակությունը բարձր է գնահատել ազգային մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանը: Կարելի է ասել, որ ժողովրդի հանձարը Իսահակյանի

¹ Տես, Վ. Հարությունյան, «Դաստիարակ: ական գաղափարների ժողովրդական հեքիայներում», Երևան, Հայպետ. հր., 1959, էջ 70

² Խ. Արքովյան, «Վերք Հայաստանի», Երևան, 1959, էջ 7

³ Տես, Մ. Միքոյանյան, «Ղ. Աղայանի մանկավարժական ժառանգությունը և նրա այժմեականությունը», Երևան «Լույս» հր., 1991, էջ 14-15

⁴ Ար. Ծավադյան, «Հայ մանկավարժներ», գիրք Ա, Երևան, 1958, էջ 259

⁵ Հովի. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1969, էջ 90-92

շտական ուղեկիցն է եղել: «Միքիլագույն Շիրանն ինձ հասար տիեզերքի կենտրոնն է եղել... այստեղ էր անշտ տատկվներից լսել նա ուրիշ կախարհող հերիաքները, մեր վարձաշատ պապիկներից ընտան գուրգները, խոսք առայ: Մեր թափառական գուտաններից է գուրգացի աղջիկները լսել նա մեր ժողովրդի չքնաղ տաղերն ու խաղերը, արտահույզ երգերը: Մեր հնադարյան խորհատատ ֆոլկլորը, որին նա այնքան ու անքրան երախտապարտ նա:»¹

Ավանդույթների դաստիարակչական նշանակության մասին նշել են նաև մեր ժամանակի գրողներն ու մանկավարժները: Իրավագիտրեն քննադատելով պաճաղույթը ժխտողներն ու «նորարարությանը» տառապողներին, Պարույր Սևակը նշել է. «Իստեղ պաճաղույթը նույնն է, ինչ ժառանգության ժխտումը, որ միայն հիմարություն չէ, այլ խելագարություն»: «Տայ մեծ բանաստեղծի ասածը հավասարապես վերաբերվում է նաև երիտասարդ սերնդի հայնդի դաստիարակության ընտանգագային, որ մշտապես պիտի խելամտորեն օգտագործել առաջադիմական պաճաղույթները:

Անվանի մանկավարժ Հենրիկ Մախչանյանի կարծիքով, անհնար է ստեղծել դպրոցի ողը «առանց ալանդույթների կոտակման»,² այսինքն այն օրենքների և սովորույթների, որոնք ընդունվել են արդեն ոչ թե գուտ գիտակցությամբ, այլ գիտակցական հարգանքով դեպի ալաղ սերնդայնդի փորձը: Ավանդույթը չի ստեղծվում մեկ կամ մի քանի տարում, նա մարդկության և կոլեկտիվի մշակած երկար տարիների աշխատանքի արդյունքն է:

Ազգային առաջադիմական պաճաղույթների դաստիարակչական նշանակության մասին դպրոցի ու մանկավարժության առաջադիցի, գյուական-հասարակական գործիչների հիմարարդ որույթները շատ շատ են, անվան հնարավոր չէ ամտարային մեկ իտղվածի մեջ ներառել յուրոր: Ուստի որանց ուսումնասիրությունը և սովորողների հայնդի դաստիարակության ընտանգարում առաջադիմական պաճաղույթների օգտագործումը ուսուցիչների առաջնահերթ իտղիքն է: Անհրաժեշտ ենր հասարում այդ ուղղությանը ԼԵՂ հանրակրթական դպրոցների ուսուցիչների առաջադիր փորձը յուտարանել մեր հնտագա ուսումնասիրության ընտանգարում:

Резюме

В настоящей статье с научно-педагогической позиции проанализированы и обобщены ценные мысли классиков-педагогов и литературно-политических деятелей о воспитательной значимости народной традиции.

Одновременно предлагаются методические указания учителям о том, как использовать передовые традиции в течение урока и внеклассной воспитательной работы.

Գրականություն

1. Ա. Արույան, «Ալերք Հայաստանի», Երևան, 1959: Երկեր լիաի. ժողով., հ. 7, Երևան, 1956:
2. Հովի թուսանյան, Ա.ժ.ժ., հ. 4, Երևան, 1969:
3. Ավ. Խասակյան, Ա.ժ.ժ., հ. 4, Երևան 2, 1964:
4. Ա. Դ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 1, 1958:
5. Ա. Շավարշյան, Տայ մանկավարժներ, գիրք Ա., Երևան, 1958:
6. Հ. Մախչանյան, Ավանդույթների ստեղծումը դպրոցում, Երևան, 1970
7. Գ. Հարությունյան, Դարգականներին դաստիարակել առաջադիմական պաճաղույթներով, Երևան, 1990:
8. Վ. Հարությունյան, Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հնրիայնդում Երևան, 1959:
9. ՀՀ հանրագիտարան, հ.1, Երևան, 2003:

ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

¹ Ավ. Խասակյան, Երկերի ժողովածու, Երևան, էջ 168:

² Գ. Հարությունյան, «Դարգականներին գուտիարակել առաջադիմական պաճաղույթներով», Երևան «Լույս», հր., 1990, էջ 5:

³ Տե՛ս Հ. Մախչանյան, «Ավանդույթների ստեղծումը և արմտակարումը դպրոցում», Երևան, «Լույս» հյ 1970:

+	<i>Г.Г. Саркисян</i>	Роль и значение анализа финансового состояния производственных предприятий НКР.....	90	+
+	<i>Ա. Գ. Հակոբյան</i>	Ռացիոնալի և իրացիոնալի միասնությունը հումանիտար ճանաչողության գործընթացում.....	97	+
+	<i>Ս. Վ. Ասիրյան</i>	Մարդու իրավունքների և ազատությունների ամրագրումը ԷՂՀ օրենսդրությունում.....	102	+
+	<i>Լ. Ա. Աղամյան</i>	ԷՂՀ հեղակումը և նրա միջազգային ճանաչման գործընթացը.....	105	+
+	<i>Ն. Կ. Մանգասարյան</i>	Հաջող մուտք-վերընթաց ճանապարհ.....	110	+
+	<i>Ս. Լ. Գրիգորյան</i>	Ձայն ամենայն հայոց.....	115	+
+	<i>Ա. Վ. Բայասանյան</i>	Հնի և նորի պայթյալը դրամատիկական ուղեծրում (Ն. Ջարյանի «Արմաշեն» պիեսը).....	118	+
+	<i>Ն. Վ. Աբրահամյան</i>	ԷՂ հիմնախնդիրներն ու լրատվական դաշտը 1988 - 1991թթ.	121	+
+	<i>Ա. Ս. Զաքարյան</i>	Աշակերտների լեզվատրամաբանական մտածողության զգացումը մայրենիի դասերին.....	124	+
+	<i>Ս. Ա. Մինսայան</i>	Միջազգային հայրենագիտական ութերորդ գիտաժողովը.....	127	+
+	<i>Լ. Ս. Սանթրյան</i>	Ժխտման արտահայտության բառակազմական միջոցները հայերենում.....	130	+
+	<i>Մ. Ս. Արուստյան</i>	Трагический гуманизм и проблема отчуждения в трагедии "Гамлет".....	135	+
+	<i>Н.В. Дурасаян</i>	Цели и задачи языковой политики совета Европы.....	138	+
+	<i>Ջ.Ր. Բեղլարյան</i>	Безличные глаголы и их употребление в безличных конструкциях.....	141	+
+	<i>Ա. Յ. Այրապետյան</i>	Этапы изучения залога глагола немецкого (как основного) языка в ВУЗе.....	144	+
+	<i>Գ. Ս. Բաբայան</i>	Ներբառերկալական և միջաբառերկալական կապերի կիրառումը «Էկոլոգիական համակարգ» թեմայի դասավանդման գործընթացում, հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանում.....	147	+
+	<i>Ա. Ա. Գրիգորյան, Հ. Ա. Բնգյալարյան</i>	Համակարգիչը՝ թիմիայի դասին.....	150	+
+	<i>Է. Զ. Բաղդասարյան</i>	Ուսանողների ինքնուրույն աշխատանքի որակի բարձրացման հիմնախնդիրները.....	157	+
+	<i>Ա. Ռ. Բարդասարյան</i>	Դասական մանկավարժները առաջադիմական ավանդույթների դաստիարակչական դերի մասին.....	161	+

38 Հուլիս 85

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет

Գիտական տեղեկագիր

Ученые записки

2 (18)

2008

Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Ա. Գոշի փ. 5

հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14

E-mail: pethamalsaran@ktsurf.net

Арцахский государственный университет, Степанакерт, ул. М. Гоша, 5
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14

ՎԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր» պարբերականում հրատարակվում են օրիգինալ հոդվածներ ու մամուլներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներին:
2. Ընդունվում են նաև ԱրՊՀ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական զյուրոցների նյութեր:
3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված, մեկ ինտերվալով, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն ամփոփումներով: ՀՏԳ-ից (վերևի ձախ անկյունում), հոդվածի վերնագրի և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտացիա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջ, հաղորդմանը 4, մամուլինը՝ 2:
4. Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության բաղվածք այն ամբողջից, որտեղ կատարվել և բննարկվել է աշխատանքը:
5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված առանձին սպիտակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեքստի լուսանցքներում նշվում է նկարների և աղյուսակների տեղերը:
6. Միեւնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի բույլատրվում:
7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը, քառյակի փակագծերում [1,3-5], ըստ հանդիպման հերթականության: Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումն առանց չակերտների, քվականը հատորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքի դեպքում հրատարակման վայրը, հրատարակչությունը, քվականը և էջը: Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի առենախտությունից) գրականության մեջ նշել չի բույլատրվում: Արտասահմանյան գրականությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ օրիգինալով:
8. Հոդվածի տեքստի վերջում ձախ կողմում նշվում է այն ամբողջը կամ լաբորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:
9. Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале „Ученые записки, АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиопизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.
2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.
3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через один интервал на русском, армянском или английском языках, с армянским или русским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе в таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.
4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.
5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.
6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.
7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках [1,2-5]. В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе- на языке оригинала.
8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.
9. Статья подписывается всеми авторами.